ԾԱՂԻԿ կը հրատարակուի Շաբաթ օրերը. — Հատը 40 փարա։

Բաժանորդագին ԿԱՆԽԻԿ — Պոլսոյ համար տարեկան 45 ղրշ. վեցամսեայ 23 ղրշ. եռամսեայ 12 ղրշ. — Գաւառաց համար տարեկան 50 ղրշ. վեցամսեայ 26 ղրշ. եռամսեայ 14 ղրշ.։

Ռուսիոյ համար տարեկան հինգ րուբլի. Ուրիշ երկիրներու համար 12 ֆրանք։

Գաւառներէն դրոշմաթուղթ կ'ընդունուի։

Միայն երկու թիւ ստանալէ կը գրկուի. այնուհետեւ բաժանորդագին չը վճարողը կը դադրի թերթ ընդունելէ։

Ծանուցման տողը 2 ղրշ.։

40 փարա

ԾԱՂԻԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Քաղաքական եւ Գրական

ԾԱՂԻԿի վերաբերեալ ամէն գործի համար պէտք է դիմել,

Առ Տնօրէն-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Պոլիս, Էսկի-Զապթիէ, Պէրպէրեան Տպարան

درعلیه‌ده اسکی ضبطیه زقاغنده بربریان مطبعه‌سنده

پالاقاشیان حوونان.

HOVNAN PALACACHIAN

Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian

CONSTANTINOPLE

40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Ա. ՏԱՐԻ. ԹԻՒ 19 | ՇԱԲԱԹ | 19 ՅՈՒՆՎԱՐ 1891

ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ (1)

1.

Քրիստոնէական սրբազան պաշտամանց ամենէն գլխաւորն եւ միանգամայն կեդրոնն է՝ Պատարագի պաշտօնն։ Ամենէն գլխաւորն եւ կարեւորն է նա, որովհետեւ ի Քրիստոսէ հաստատեալ է, եւ ամէն հաւատացելոց վերայ պարտք դրուած է ժամանակ առ ժամանակ այդ Խորհրդոյն անձամբ, բանիւ եւ գործով մասնակից լինել, այսինքն, նախ՝ Պատարագին բարեպաշտութեամբ ներկայ գտնուելով՝ ինքն եւս քահանայի հետ մատուցանէ, եւ երկրորդ՝ նոյն մատուցեալ սրբութենէն հաղորդի կամ ճաշակէ։ Քրիստոս եւ Առաքեալք եւ ընդհանուր Եկեղեցին կը պահանջեն որ իւրաքանչիւր հաւատացեալ անպատճառ մասնակցի այդ մեծ Խորհրդոյն եւ ստանայ ի նմանէ այն շնորհներն ու օգուտներն, որք անհրաժեշտ են ի փրկութիւն անձին։ Նաեւ ասացինք թէ Պատարագն կեդրոն է քրիստոնէական սրբազան պաշտամանց. վասն զի իբրեւ ամենէն հին քրիստոնէական արարողութիւն, յորում ամփոփուած է քրիստոնէական հաւատոյ ամենէն էական մասն, բոլոր ուրիշ հասարակաց աղօթք անկէ օրինակուած են, եւ նորա մէջ կը գտնուին բոլոր ուրիշ հասարակաց աղօթից սկզբունքն եւ հիմունքն։ Ըստ այսմ՝ եկեղեցւոյ եւ հաւատոյ միութեան կեդրոն եւս է այս Խորհուրդն, որով լեզուի, ազգութեան եւ բնակութեան զանազան պարագայիւք ի միմեանց հեռացեալ քրիստոնեայք կը միանան յերկրպագութիւն Բարձրելոյն ի ձեռն միոյ միայնոյ Պատարագին Քրիստոսի, որոյ մշտնջենական ընծայումն եւ յիշատակն է այս մեծ Խորհուրդ։ Ասոր համար է որ այնքան մեծ նշանակութիւն եւ կարեւոր տեղ ստացած է Պատարագն մեր սրբազան պաշտամանց մէջ. եւ այսպիսի առարկայի վերայ գրելն եւ աստուածային պաշտօնն աւելի դիւրիմաց եւ օգտակար ընել ժողովրդին՝ մեր անհրաժեշտ պարտականութիւնն է, եւ միայն կը խնդրեմք յԱստուծոյ որ այս փոքրիկ ձեռնարկութիւնն, որ յաւէտ փորձ եւ նախագիծ մի է քան թէ կատարեալ գործ, օրհնէ եւ զերծ պահէ վրիպակներէ եւ մարդկօրէն թերութիւններէ, եւ տայ զօրութիւն՝ բացատրել այս իւր երկնային ճշմարտութիւնն ի փառս մեծի անուան իւրոյ եւ ի շինութիւն հաւատացելոց ի Քրիստոս։

2.

Մեր նախահարց անկումէն զկնի մարդոց աստուածպաշտութեան ամենէն կարեւոր մասն էր՝ կենդանեաց եւ մինչեւ իսկ մարդոց զոհն, զոր կը նուիրէին Աստուծոյ իբրեւ քաւութեան պատարագ՝ նորա ցասումն իրենց վերայէն դադրեցնելու համար։ Նոյն իսկ Հրէից մէջ այս սովորութիւնը տարածուած էր եւ առանց արեան զոհի՝ աստուածպաշտութիւն անհնար իմն կ'երեւէր Իսրայէլեան ազգին։ Ասկէ կը հետեւի թէ մարդոյս սրտին մէջ տարրացած եւ ընդհանրացած բնական միտումն եւ կարիքն՝ արիւնալից զոհ մատուցանել առ Աստուած, ուրիշ բանէ յառաջ եկած չէ, բայց եթէ իւր բնութեան խանգարումէն որ կ'ըսուի անկումն Ադամայ։ Քանզի այն անձն որ մի այսպիսի պատարագ կը մատուցանէ, կ'ուզէ խոստովանիլ թէ ինքն մահացու մեղաց տակ կը գտնուի եւ արժանի է մահուան, մահապարտ է, եւ ուրիշ կենդանւոյ մը արիւն թափելով եւ զայն Աստուծոյ նուիրելով՝ կ'ուզէ իւր մահուան փոխարէն այն անմեղ կենդանւոյն կեանքը նուիրել եւ ինքն մահուան պատիժէն ճողոպրիլ։ Ամէն ազգի մէջ ամէն ժամանակ պատարագի նշանակութիւնն այս է եղած. եւ Հրէից զոհերն եւս որ առանձին աստուածային յայտնութեամբ սահմանուած էին, այսպէս եւ այս նշանակութեամբ կը կատարուէին. ուստի կը հետեւի թէ այս զոհի բաղձանքն իրօք մարդկային զառածեալ բնութենէ յառաջ եկած՝ անճողոպրելի կարիք մի էր. քանզի երբ աստուածային յայտնութիւնն (ինչպէս առ Իսրայէլացիս եղածն) մարդկային խղճի միայն համաձայն կը գտնեմք. յետ այնու այլ եւս տարակոյս չը մնար թէ այդ է մարդկային բնութեան իրական վիճակն, եւ ոչ թէ իբրեւ նախապաշարումն կամ անապաշտութիւն համարելու է։ Բայց կրնայ առարկուիլ թէ՝ հակառակն է որ մարդս մեղաց փրկութենէ իւր հոգեւոր չփոթութիւնն ամոքելու եւ իւր վրայէն մահուան պատիժն հեռացնելու յուսով՝ այս տեսակ միջոցներու կը դիմէր. սակայն Աստուած ի՞նչպէս կ'ընդունէր ուրիշ կենդանւոյ մը արիւն ի տեղի արեան մահապարտ մարդոյ։ Այս կը տանի զմեզ մարդեղութեան անճառելի խորհրդոյն խորերն, որոյ բացատրութիւնը մեր ներկայ նպատակէն եւ սահմանէն դուրս է. առ միայն կրնամք համառօտ կերպիւ ասել թէ Քրիստոսէն յառաջ կատարուած զոհերն Աստուծոյ միայն այնքան ընդունելի էին եւ մարդոյս այնքան նպաստակարար, որքան որ նոքա Քրիստոսի մահուան նախատիպ եւ նախագաղափար էին. եւ Աստուած ալ զայն հաստատած էր, որպէս զի յանցաւոր առաջին Ադամայ զաւակունք անմեղ անասուն մը մատուցանելով անմեղ երկրորդ Ադամայ պատկերը մատուցանեն ի գահոյս Բարձրելոյն, եւ այնպէս ստուերաբար ակնարկեն Քրիստոսի Խաչի անեղ պատարագին, որ յետոյ ի Գողգոթայ կատարելոց էր։ Մարդոյս դարաւոր հառաչանքն դադրեցաւ եւ իւր հոգեւոր չփոթութիւնն կատարելապէս ամոքեցաւ այս պատարագովն, եւ միայն կը մնայ որ իւրաքանչիւր մարդ այդ մահուան արդիւնքն իւրացունէ, եւ յետոյ իւր փրկութիւնը կատարեալ է։ Իւրաքանչիւր քրիստոնեայէ կը պահանջուի որ այդ աստուածահաճոյ պատարագն առանձնապէս մատուցանէ առ Աստուած, այսինքն մատուցուած պատարագին այնպիսի երկիւղածութեամբ մասնակցի, որպէս թէ ինքն անձամբ կը մատուցանէ, որպէս զի անոր արդեանց հաղորդ լինի. եւ որպէս զի կարենամք անհատաբար կատարել այս պարտքն՝ Քրիստոս ինքն միջոց մը հաստատած է մեզ համար, որով միայն կարող եմք արդիւնաւորել մեր անձին վերայ այդ փրկագործութիւնն, եւ այս միջոցն է Պատարագի Ս. Խորհուրդն։

3.

Ցերեկային Մեծի Հինգշաբաթի, Քրիստոս հանդերձ իւր աշակերտօքն ժողովեալ ի վերնատունն՝ Հրէից ամենէն նշանաւոր տօնը, որ է Զատիկն, կը կատարէր. այն տօնը՝ որոյ սկզբնաւորութիւնը թէպէտ պատմական է, այլ նաեւ աւելի ճշմարտութեամբ Քրիստոսի մահուան նախատիպն եւ ստուերն էր։ Ի յիշատակ Իսրայէլացւոց ազատման յԵգիպտոսէ, Աստուած պատուիրած էր որ իւրաքանչիւր տան մէջ մի անարատ տարեւոր գառն զենուի եւ անոր արիւնը տան դրան սեմոց վերայ սրսկուի, որով Իսրայէլացւոց անդրանիկ որդիքն պիտի փրկուէին ընդհանուր աստուածային պատուհասէն, որ Եգիպտացւոց վերայ եկած էր եւ անոնց անդրանիկները կը ջարդէր։ Այս անգամ մինչ Հրեայք իրենց ստուերական տօնը կը կատարէին, Քրիստոս իսկական տօնը կատարելու կը պատրաստուէր. նա ինքն էր ճշմարիտ Գառն որ պիտի զոհուէր յաջորդ օրն, եւ Քրիստոս այդ տօնի նախապատրաստական մասը կը կատարէր վերնատան մէջ. եւ այս առթիւ հաստատեց Ս. Պատարագի Խորհուրդն։ Բուն եւ իսկական Պատարագն այն էր որ յաջորդ օրն ինքն պիտի մատուցանէր ի վերայ Խաչին առ Հայր վասն փրկութեան ազգի մարդկան, եւ հիմա մէկ միջոց ցոյց կու տար որով հաւատացեալք յամենայն դարս եւ ամենուրեք կարենային այդ պատարագի արդիւնքն իւրացնել եւ վայելել։ Ինչպէս որ Ադամէն ժառանգած էինք հոգեւոր տկարութիւն եւ մեղք, նոյնպէս ալ Քրիստոս զմեզ որդեգրեց եւ մեր սկզբնական մեղքը ջնջելով՝ մեզ ժառանգութիւն թողուց արդարութիւն եւ հոգեւոր զօրութիւն։ Ադամէն ժառանգեալ տկարացեալ մարդկային բնութիւնն՝ իւր Մարմնոյ եւ Արեան կազդուրիչ եւ զօրացուցիչ կերակրովն՝ իւր նախկին երանաւէտ վիճակին հանելու միջոց տուաւ եւ զմեզ իւր փառաւորեալ Մարմնոյ կատարելութեան ու շնորհաց ընդունելութեան արժանացոյց ի ձեռն Ս. Հաղորդութեան։ Հաց

(1) Արժան կը համարիմք արտատպել Աստուածաբանութեան ծանօթ ուսուցիչ Արժ. Թորոս Ջուղայեցւոյ՝ Հայոց համար կարեւոր եւ օգտակար այս պատուական աշխատասիրութիւնն։ Ծ. ԽՄԲ.

և գինին մարդոյս սնընդեան գլխաւոր առարկաներն են, ուստի և յարմար միջոց խորհրդաւոր ներգործութեան աստուածային շնորհաց: Հաց և գինի առնելով՝ օրհնեց և զայնս իբրև իւր Մարմին և Արիւն հռչակեց և պատուիրեց որ արժանաւոր արարողութեամբ նոյնը միշտ կատարեմք ի յիշատակ մահուան և մեծ պատարագին իւրոյ. այսինքն սրբագործեալ հացն և գինին, որոյ մէջ անիմանալի կերպիւ ներկայ է փառաւորեալն Քրիստոս, մատուցանեմք առ Հայր և յիշեմք թէ ինչպէս Քրիստոս մեռաւ վասն մեր, և ի սէր այդ անարատ զենեալ Գառին խնդրեմք թողութիւն մեղաց մերոց և միանգամայն ճաշակելով ի նմանէ միանամք Քրիստոսի հետ և անոր կատարելութեանց մասնակից և հաղորդ լինիմք: Այսպէս հաստատուեցաւ այս Խորհուրդ որ Առաքելոց ժամանակէն ի վեր անընդհատ դարուց ի դարս կատարուած է ի լրութիւն և յիրագործումն արդեանց փրկագործութեան Քրիստոսի:

(Շարունակելի) ԹՈՐՈՍ Տ. Ի. ՋՈՒՂԱՅԵՑԻ
վարժապետ Աստուածաբանութեան

ԵՐԵՔ ՏԱՌԵՐ

Մեր մայրենի
Տառերն ո՛րչափ
Են սիրելի.

Այո՛, սակայն
Նոցա երեք
Հատը միայն

Ես առաւել
Անձկաւ ուզեմ
Կարդալ, լսել...:

(Ս) գիրն այն՝
Նախ եւ յառաջ՝
Լուռ մեղմաձայն,

(Է) տառն յետոյ,
Եւ (Ր)ն, բա՛րէ,
Վերջ ի վերջոյ.

Բայց անմեկին՝
Անմիտ գուցէ
Սոքա ըլլին...:

Մեծահասոր
Մասեաններ են
Խորհրդաւոր.

Սոցա ա՛ղէ
Ծընած բառն ինձ
Պաշտելի է.

Այն՝ խորափոր
Ոսկեքանդակ
Ու արմատաւոր

Պիտի մընայ
Տըխուր սրտիս
Էջին վրայ,

Ցորչափ խաղան
Սոցա բըրբուռն
Թելերն արեան:

ԲԱՐԵԿԱՄՆ

ԱԶԴ

Երիտասարդ մը վկայեալ բարի վարուք, որ գիտէ Փրանսերէն և հայերէն, կը փափաքի մասնաւոր տան մը մէջ մանկավարժի պաշտօն ստանձնել. պէտք ունեցողք կը հրաւիրուին ի Խմբագրատունս:

ԳԵՂՋՈՒԿ ՍՈՎՈՐՈՅԹՔ

—

ՅԻՇԱՏԱԿ Մ'ԱՆՑԵԱԼԷՆ

Թուականներ կան որոնք՝ անմոռանալի կերպով՝ մանկանցուաց մտաց մէջ մարմնացեալ կը մնան: Այսպէս ահա՛, 1875 թուականի ձմերային մի յիշատակը, զոր պիտի նկարագրեմ յառաջարանիս տակ, իւր բոլոր մանրամասնութեամբ ցարդ գրուած է մեր սիրան համակ:

* * *

Առաւօտ մը, Փետրուարի խստաշունչ առաւօտներէն մին, հիւսիսային փոթորկալի քամին՝ Վանի վանակնափայլ ծովի միրկոյոգ կոհակների վրայէն ամեհի վազքի մը նման գոռալով, Գոմաց Ս. Գէորգայ լերան ետևէն կարճկանի բաժակաձև դաշտի մէջ խուժելով, մի և նոյն դաշտին մակերևոյթն պատող փոշիացեալ ձեան անհամար հատիկները կը յուզէր ու բնութիւնն իւր բոլոր փառազարդութիւններէն խպառ կապտելով, մարդոց և անասնոց արհաւիրք կ'առթէր:

Լեռներ ամէն՝ որոնք կը պատեն այդ չքնաղ դաշտի եզերքն, իրենց ստորճանական բաժանման մեծ ու փոքր առաւելութեամբ, արևելքէն կ'երթան կը յանգին Գաւաշ գաւառի պահապան Ընծաքար ծերունի սարի պատուանդանին, որ գագաթէն՝ Յակոբ Մծբնայ Ս. Հայրապետը՝ զայրագին սրտով անիծեց Ռշտունի Մանաճիրն, նորա եօթն սարկաւագներն անգթաբար ծով ձգելուն համար: Իսկ արևմուտքէն գեղասքանչ անտառաց սրտագրաւ երևոյթով մ'անհամեմատ տեսքով կ'եզերեն հարաւէն Վանայ ծովն ու կ'երթան կը հասնին մինչ Ազնուաձորոյ յաղթապանծ լերանց պսակն եղող Կարեղ նշանաւոր լերան թևերն, որոյ վրայ բուսած սունկըն ու խաւըրծիլ (իշխուն) նորա անմաշելի փապարների մէջ խայտացող թեթևսոտ այծեամների հետ խիստ նշանաւոր են ի մէջ այս երկրի:

Առաւօտեան այս ձմերնային սրդեցութեան տակ, երբ գեղջուկ տանուտէրն անքուն կը հսկէ իւր սիրելի անասնոց և կենդանեաց փարախների մէջ, մէկ կողմէն նորածին գառնուկի անուշ բառաչն ու նորա մօրկան գուրգուրանքն, միւս կողմէ իւր աշխատաւոր եզանց որոճալն ու մըլլալն դիտելով, ինքն իրմով ո՞րքան գոհ է և քանի՞ անկեղծ սրտով կ'օրհնէ իւր հարց Աստուածն՝ որ լեցուցած է իւր չուրջ հազար ու մէկ բարիքով: Իւր թոռներ ու զաւակներն ուռճեր ու ծաղկեր, հարսներն ու աղջիկները պարկեշտ ու գեղեցկադէմ, իւր արտերն ու ախեր պտղատու ու արդասաբեր, — ահա այս է մեր նահապետ Տանուտէր Յակոբի կեանքի նկարագիրն, ամէն օր մէկ քիլ ցորենով իւր տան մէջ հաց կ'եփեն, ամէն ազգէն անխտիր եկող գացողն զայն կ'ուտէ, հարիւրաւոր բերան ամէն օր հազար անգամ «քոյ տուն չէ՛ն մնայ» կը կրկնէ:

Տանուտէր Յակոբի սիրտը այսօր տարապայման բերկրանք և սրտի կը զգայ, — իւր սիրելի թոռնիկ Յովսէփն պիտի նշանէ, ուստի և ինքն իրեն կը խորհրդածէ, ներկայն ու ապագայն իւր աչաց առջև կը բերէ, և քանի որ սիրուն Յովսէփիկն ինքն շատ կը սիրէ, եթէ ունկն դնենք իրեն, մենախօսութեան մը մէջ այսպէս կ'ըսէ.

« Վաղ առաւօտ Օ. Գիւղն պիտի երթանք, գիւղապետ Պետրոսի Շուշանիկ աղջիկն նշանենք Յովսէփին. եթէ այս բան բարի է՝ Աստուա՛ծ, դուն յաջողես, եթէ չար է մեր խորհուրդն, չը կատարես: »

Այսպէս պարզ բանաձևով մը՝ Տանուտէր Յակոբ կ'որոշէ նոյն օրուան իւր առաջադրեալ նպատակի գործադրութիւնն, պարզ և յստակ կերպով կը խօսի նաև իւր Տան տիկնոջ (իւր տիկնոջ). « Մենք պէտք է Յովսէփ թոռնիս նշանենք, որովհետև իր տարիքն 18ի կը հասնի և մենք երկուքս ալ ծերութեան կը մօտինք, քանի որ Աստուածն իր ողորմութիւնն մեզ չէ խնայած, մենք մեր աչքով անոր « թագն ու պսակն ալ տեսնենք: »

Տան տիկին Վարդէր՝ որ կը կրէր յինքն ճշմարիտ մօր մ'անդուգական պատկերն, այս որոշումն լսած ատեն՝ վարդագոյն կը փայլին իւր այտեր, ցնծութենէն ուրիշ բան չը գըտներ իրմէ խօսիլ՝ եթէ ո՛չ Տանուտիրոջ խօսքերն կրկնել:

Աղօթարանի ծագման հետ՝ երբ Տանուտէր Յ. և Տան տիկին Վ. իրենց կենդանեաց տաքփարախին մէջ Յովսէփի ամուսնութեան վրայ կը խօսին, խեղճ Յովսէփիկն առ այս ոչինչ գիտէ և ո՛չ Տանուտիրոջ միւս ընդածինք, որոց մէջն է նաև Տանուտիրոջ երէց որդին Վարդան՝ որ հայրն է Յովսէփայ: Հայաբնակ գաւառաց ժողովրդեան սովորութիւնն այսպէս է ահա՛. որքան որ ամուսնացողքն իրենց զաւակներն ըլլան, սակայն անոնք այդ մասին կարծիք յայտնելու իրաւունք չունին շատ. իրենց մեծերն ու ծնողքն ինչ որ կամենան, իրենք պէտք է հնազանդ մնան: Շատ տեղեր ու նահապետական բարեհամբաւ տներ դեռ ևս այս սովորութիւն կը պահեն:

Հազիւ թէ արշալոյս կ'սկսի բացուիլ, ժամկոչ Սարգիս կ'ելնէ ի տանիս, « ժամ հրամեցէ՛ք » կը գոչէ, թռչելով երդիսէ յերդիս:

Ժամակոչ Սարգսի ձեռամբ կը բացուին դռներն Ե. գիւղի Ս. Թումա եկեղեցւոյն, որ կը բարձրանայ տանձին փայլով մը գեղջուկ տներէն գեր ի վեր: Խորանին կանթեղը ըղկար կերպով կը պլպլացնէ իւր անզօր ճաճանչներն, կը հաւաքուին գեղի երեք տէրտէրներըն ու երկու տասնեակ տիրացուներ, ու ամէն մէկն իւր յատուկ եղանակաւ կ'սկսի երգել մեր պաշտելի Ս. Նախնեաց հոգեզուարճ երգերն ու շարականներ: Բարեպաշտ ժողովուրդն որ կանխած է խուռներամ գալ ի տուն Տեառն, որպիսի՛ երկիւղածութեամբ կը լսէ մեր այս ինքնուս երգիչների խառնաշփոթ ձայներ, ու ի՞նչ ջերմեռանդութեամբ արդեօք ո՞վ գիտէ ինչեր կը մրմնջեն. պանդխտին ծնողքն ու սիրելիք իրենց ղարիպին բարի՛ն ու գործին յաջողութիւն ամենէն յառաջ կը խնդրեն:

Կ'արձակուի գեղջուկ ժամն ու պաշտամն, ամէն ժամուորներ (եկեղեցի երթացողք) կը դիմեն իրենց տուն, ոմանք մերկ և ոմանք բոկոտն, հազիւ կը նետեն գիրենք իրենց թոնրան մօտ՝ տաքցնելու իրենց ձեռքն ու ոտք:

Միւս գեղջուկների նման եկեղեցիէն տուն կը դառնայ Տանուտէր Յ.ի որդի Վարդան, ուր կը գտնէ իրենց թոնիրն հնոցի մը նման վառուած և իւր հայր ու մայրն իրարու առընթեր բազմած և հոգւով ու մտքով պաշարուած Յովսէփի ամուսնութեան խնդրով: Բայց միթէ ինքն իւր ծնողաց համակերպիլն կը սիրէ՞ դժրել. քանի որ տան մեծն անոնք են, ի հարկէ փորձառաբար իրենց զաւակաց և տան համար միշտ օգտակարն կը մտածեն,

«զի բանք ծերոց հաստեն» խօսքին կատարելապէս վստահ են։

Կ'լջնեն թոնիրներն, կը թխուին կարմիր ու համեղ լօշեր (փիտաներ), բայց Տանուտէր Ց.ի տան իգի ջենջերոցներն ամբողջ գիւղը կը պաշարեն, ըստ որում մեծ քանակութեամբ գաղայ (չօրէկ) կը թխեն, որպէս զի հարսնախօսի երթայօղք իրենց հետ տանին։

Ցորեկուան ճաշն կը լմնցնեն յատկապէս հըրաւիրուած քաւորի և գեղի տէրտէրի հետ. այս միջոցին Տանուտէրն կ'սկսի պատմել թէ՝ նոյն օրն հարկ մը կայ իրենց առջեւ, պէտք է կատարեն։ Ճաշին՝ որ գեղջուկ անպատ կեանքի բոլոր պարզութեամբ և առատութեամբ այնքան ախորժակ էր բացեր, տէրտէրն ու կնքահայրն ի հարկէ շուտով չէին յագենար։

Այս պարագային Տան տիկին Վարդը արդէն ամէն պէտքն ու կարիքն պատրաստած, չարունակ «օղուրլի ղատեմլի» ըսելով Աստուած կը մէջէ ի բոլոր սրտանց։ Պիտոյից այս պատրաստութեանց վերջանալու հետ, վերջ կը գտնեն նաև մեր ծանօթ ճաշղաց ճաշի, փիլաւի մածնի, մեղր ու կարագի դէզադէզ դգալների անընդհատ երթեւեկ։ Սեղանէն ելնելով, պատրաստուած բեռն կը բառնան մէկ հումկու եզան վրայ ու միաք բարով ըսելով, Տանուտէր Ց., Տէր Պ. և քաւոր Թ. դէպ ի Օ. գիւղ կը դարձնեն իրենց երես։ Օ. գիւղն երկու ժամու հեռաւորութեամբ՝ գեղեցիկ դիրքով կը տարածուէր Կարճկանու դաշտի այն սիրուն մասին վրայ որ գարնան գեղափայլ եղանակին եդեմի կը պատկերէ հէք մանկանայութին.

Գիւղապետ Պետրոսն ևս ոչ նուազ պատիւ և փառք կը վայելէր՝ որպէս Տանուտէր Ց. որ նոյն գաւառի բոլոր բնակիչներէն կը յարգուէր։ Այս երկու գիւղի երկու նահապետական տներն՝ իրենց գլուխն ունէին իրենց բարի նահապետներն։ Անշուշտ նման զնման պէտք էր սիրել։

Տանուտէրն՝ իւր մարդիկներով ուղղակի Գիւղապետ Պ.ի տուն կը դիմէ, ու քանի որ նորա արդէն իրերաց ծանօթ են, այս յանկարծակի գալուստ այնքան զարմանք չպատճառեր, բայց և այնպէս մեծ հետաքրքրութեամբ նստելու կը հրաւիրեն զանոնք, ու ի մեծարանս կը հանեն անոնց տրեխները, տաք ջրով ոտները կը լուացնեն, և ապա՝ տան մէկ կողմը՝ պարզուած նախշուն կապերտներու և փայլուն թաղիքներու վրայ ծալապատիկ կը նստին, ամէն մէկ հիւրի թևին կակուղ խոտով լեցուած բարձիկ մը յենարան տալով։ Երբ կ'աւարտի հիւրասիրութեան այս արարողութիւնն, տան մէջ գտնուած հարսներն ու աղջիկներ կարգաւ եւ խոնարհութեամբ կ'երթան համբուրել հիւրերու ձեռները, հարսներն իրենց գլխու քաֆիկով (եազմա) երեսներն աննշմարելի կերպով գոցելով։ Եթէ այս սովորութեան անծանօթ մէկը տեսնէ զանոնք, կը կարծէ թէ դիմացինին երեսը տեսնել չ'ուզելուն համար կը փակեն իրենց աչեր։ Իսկ աղջկունք բաց երես կը ներկայանան, որոց մէջն է Շուշանիկն, զոր երբ կը տեսնէ Տանուտէր Ց., կը մխիթարուի իւր անսխալ ընտրութեան վրայ՝ ի սիրտ և ի հոգի. Երեկոյին կը հասնի ընթրիքի վայրկեան, Տանուտէր Ց. կը բանայ իւր բերան ու կ'ըսէ. «Բէյլիս Պետրոս, դուն գիտե՞ս թէ մենք էս (այս) ձօւն ու բքուն ինչո՞ւ էս տեղն եկեր ենք»։ «Ձ'է, ես ի՞նչ գիտնամ», կը պատասխանէ Բէյլիս Պետրոս։ «Օր էնպէս է, քանի օր խացն չ'ենք կերած, մեր խնդիրքն բանանք։ Մենք եկեր ենք քու խետ բարեկամութիւն մը կապելու, և քու աղջիկ Շուշան՝ իմ թոռ Ցավէփին ուզելու։ Եթէ ըլըմաթա՝ Աստուած թող կամենայ և կը խնդրենք որ դուն էլ չաքար մ'ուտես. տեսնանք ի՞նչ հըրամանք կընես»։

Բէյլիս Պետրոս մէկ երկու վայրկեան լուռ և մտախոհ իւր ծխափայտ բքելէն և իւր ուղեղն փոքր ինչ նորոգելէն վերջ, կ'ըսէ. «Խնամ Ց. երբ օր դուն քու բարի բարեկամներով՝ մինչև էս տեղն նեղացած եկած ես, ես էլ զիմ աղջիկն քեզ մատաղ կ'ենեմ, Աստուած իրենց խաց ու տօլվաթ տայ, եթէ քու խնդիրքն մինակ այս ա, էլի բան մը չ'է, ուրիշ բան մը կայ, սաս՝»։ «Մեծապատիւ շնորհակալեմ». կը պատասխանէ Տանուտէր Ց. «Աստուած զքու խաթըրն բանայ» կը յաւելու քաւոր Թ.»։ Ու անմիջապէս մատանի մը ծոցէն հանելով՝ հրաման կ'ընէ որ Շուշանիկն իրենց առջեւ գայ, որ պարագային նա արդէն տան մէկ մութ անկիւն քաշուած՝ անմռունչ մտիկ կ'ընէր նոցա խօսքերն որ իւր վրայ կը դառնային։ Շուշանիկ վերստին ձեռաց համբոյրներով կը պատուէ բազմականներն և քաւոր Թ. մատանին նորա մատն անցունելով, «Աստուած մէկ բարձին ծերացնէ» մաղթանքը կը կարդայ։

Այս ժամուն Բէյլիս Պետրոս սեղան բերելու հրաման կուտայ, ու Մարգարիտ խաթունն (Շուշանիկի մայր իւր ճկուն թևերն կը սօթթէ. Գեղջուկ պարզ կերակրոյ լի առատ պնակները կ'զգլխէ։ Սեղան բոլորուած պահուն Տէրտէրն կ'առաջարկէ որ քանի որ նշան տրուեցաւ, հացն ալ կարենք, ու այնպէս ընթրենք։

Այն տանէն Տանուտէր Ց.ի քաւորն, հաց մը վեր կ'առնէ սեղանէն և երկնցնելով դէպ ի գիւղապետ Պ.ի քաւորն որ իւր քով նըստած էր, «բռնէ որ կիսենք այս հացն» կ'ըսէ ու երկուք մէկէն բռնելով հացն, երկու կտոր կ'ընեն, այդ կտորները իրարու վրայ դնելով և կրկին քաշելով, չորս կ'ընեն նոյն հացն ու խաչաձև սեղանի վրայ դնելով, նշանտուութեան արարողութիւնն վերջած կը նկատեն և կը շարունակեն ուտել ու Խիզանի վարդագոյն անապակ գինին հողէ կուժ և կապիտ սկուտեղներու մէջ լեցնելով խմել ու խնդալ։ Այս մասին առ այժմ այսքան հերիք. երկրորդ յօդուածով պիտի նկարագրենք գեղջուկ հարսանիք, որոց պարագայք բաւական կը գոհացնեն հետաքրքիր բանասիրաց միտքը։

ՂԱԶԱՐՈՍ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ո՞վ կ'ուզէ $7\frac{1}{2}$ ղրուշով 15.000 Օսմ. ոսկի շահիլ, թո՛ղ փութայ գնել Բումկլիի երկաթուղւոյ պարգևաւոր վիճակահանութեան տոմսերէն, որ կը ծախուին ի Ղալաթիա, Պօրսային գիմաց, թիւ 23, ժիւլիանի և Անտրիայի Պանքան։ 4—4

—

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ Նախապատրաստական Դասագիրք. Մտաւոր և Գրաւոր. Դ. տպագրութիւն. Աշխատասիրեաց Ց. Գ. Փալագաշեան։ — Մանկավարժական նոր և դիւրուսոյց եղանակաւ պատրաստուած և մանկական բազմաթիւ պարզ և ընտանի խնդիրներով ճոխացած։ Գին 3 ղրշ։

ՎԷՊՔ Ի ՇԷՔՍԲԻՐԱՅ

—

Ա.

ՌՈՄԷՕ ԵՒ ԺԻՒԼԻԷԴ

(Տար. նախորդ թուէն եւ վերջ)

Երբ առաւօտուն կանուխ երիտասարդ Պարիսը նուագարաններով եկաւ արթնցնել իւր հարսը, փոխանակ մի կենդանի Ժիւլիէդի, նորա սենեակը ներկայացուց իւր աչաց՝ անկենդան մարմնոյ մը ագալի տեսիլը։ Ի՜նչ մահացու հարուած իւր յուսոց։ Ի՜նչ աղմուկ և շփոթութիւն տիրեցին յանկարծ բոլոր տան մէջ։ Հէքն Պարիս կ'ողբայր իւր հարսն, յորմէ կը զրկէր զինքն անգթօրոյն մահն և կը բաժնէր յառաջ իսկ քան միանալն իւրեանց ձեռաց։ Բայց առաւել սրտաճմլիկ էր լսել ողբն ու կոծն ծերունի Տէր Գաբիւլէդի եւ իւր կնոջ, որք այն միամօր միակ սիրելի դստրիկն ունէին իրենց ի մխիթարութիւն և յուրախութիւն, և արդ անգութ մահը կը յափշտակէր զնա իրենց գրկէն ու տեսութենէն՝ ճիշդ այն պահուն յորում հարսնացեալ պիտի տեսնէին զնա բարեբաստիկ միաւորութեամբ։ Արդ, ամենայն ինչ որ հրամայուած ու կարգադրուած էր հարսանեկան հանդիսին համար՝ ծառայեց յուղարկաւորութեան սև հանդիսին։ Մեռելական տխուր հացկերոյթի մը ծառայեց պատրաստեալ սեղանը, առագաստի երգք փոխուեցան հանգստեան մելամաղձիկ ողբերգութեանց, զուարթ նուագարանաց փոխան հնչեցին տրտմաձայն զանգակք, և այն ծաղկունք որք պիտի սփռուէին հարսին հետոց վրայ՝ միայն նորա դիակը զարդարելու գործածուեցան։ Հիմայ փոխան զինք պսակող քահանայի՝ խնդրուեցաւ քահանայ մը զինքն ի հող դնելու համար. և կը տարուէր յեկեղեցին ոչ եթէ կենաց բերկրալի յոյսերն յաւելցընելու, այլ մեռելոց տխուր թիւն աճեցնելու համար։

Բօթալի լուրեր, որք միշտ բարի լուրերէ աւելի արագ կը հասնին, տարին հասուցին Ռոմէօյի ի Մանտուա՝ Ժիւլիէդի մահուան ցաւալի պատմութիւնն, յառաջ քան հասնիլն այն պատգամաւորին, որ յղուած էր եղբայր Լաւրենտիոսի կողմանէ՝ իմացնելու համար նմա թէ կեղծ յուղարկաւորութիւն մ'էր եղածն, մահուան շուքն ու պատիր պատկերը միայն, և թէ իւր սիրուհին գերեզմանին մէջ կարճ միջոցի մը համար կը մնայ՝ սպասելով որ Ռոմէօ գայ ազատել զինքն այդ յոգնատխուր օթեվանէն։ Խուն ինչ յառաջ, Ռոմէօ անսովոր կերպիւ ուրախ զուարթ եղած էր։ Գիշերն երազին մէջ տեսած էր թէ մեռեր էր (տարօրինակ երազ մը, յորում մեռած մարդը կը խորհի), թէ իւր կինն եկած ու զինք մեռած գտած էր, և թէ համբոյրներով զինքն ոգեւորած ու ի կեանս վերակոչած էր, և կայսր եղած էր։ Եւ երբ պատգամաւոր մ'եկաւ Վերոնայէն, կը մտածէր թէ անշուշտ աւետիս մը բերելու համար էր, որոյ նախագուշակութիւնն եղած էր իւր երազն։ Բայց երբ իւր տեսլեան հակառակն երեւան եկաւ, և տեսնուեցաւ թէ մեռնողը իւր կինն էր զոր չէր կարող կենդանացնել իւր համբոյրներով, իսկոյն ձիեր ասպարեց, վասն զի որոշեց նոյն գիշերն իսկ Վերոնա հասնիլ և տեսնել իւր սիրելին իւր գերեզմանին մէջ։ Եւ քանզի շուտով չարին մտածումը կը մտնէ յուսահատելոց մտքին մէջ, յիշեց մի խեղճ դեղավաճառ,

որոյ խանութը մօտ էր վերջերս Մանդուայի մէջ, և որոյ մուրացկան կերպարանքն, որպէս և փոշոտ դարակներուն վրայ շարուած դատարկ տուփերը, տեսնելով, ըսած էր յայնժամ (գուցէ նախազգացում մ'ալ ունենալով որ օր մ'իւր աղէտալի կեանքն յանգէր մի այդպիսի յուսահատ որոշման). «Եթէ մէկը պէտք ունենայ թոյնի, զոր Մանդուայի օրէնք մահուան պատժով արգիլեալ է վաճառել, հոս կայ խեղճ չուառական մ'որ պատրաստ է նմա վաճառելու:» Այժմ իւր այդ խօսքերն իւր միտքն եկան, և փնտռեց զդեղավաճառըն, որ, յետ դոյզն ինչ առերեսս խղճահարութեան, քանզի Ռոմէօ իրեն կը մատուցանէր ոսկի որում իւր աղքատութեան անհնար էր դիմադրել, ծախեց նմա թոյն մը, զոր եթէ ճաշակէր, կ'ըսէր նմա, թէ և քսան մարդու խել ուժ ունենար, շուտով պիտի մահացնէր զինքն:

Այս թոյնն ի միասին առնլով յուղի անկաւ դէպ ի Վերոնա՝ տեսնելու անգամ մ'իւր սիրուհին իւր գերեզմանին մէջ, միտքը դնելով յետ գոհացնելու իւր տեսութիւնն՝ առնուլ թոյնն ու թաղուիլ նորա քով: Հասաւ Վերոնա կէս գիշերուն, և գտաւ այն գերեզմանատունն որոյ մէջ տեղ կը գտնուէր Գափիւլէդներու հնօրեայ դամբարանն: Իւր հետ առած էր լապտեր մը, բահ մը և աքծան մը, և դամբանն բանալու վրայ էր՝ երբ ձայն մը ընդհատեց իւր գործն, անարգ Մոնդակիւ կոչելով զինքն և հրամայելով իրեն ձեռնթափ լինել իւր անարժան ու ապօրէն գործողութենէն: Երիտասարդ Պարիս կոմսն էր այն, որ գիշերուան այդ անսովոր ժամուն Ժիւլիէդի գերեզմանն եկած էր՝ ծաղիկներ սփռելու և ողբալու համար նորա՛ շիրմին վրայ որ իւր հարսն եղած պիտի լինէր: Նա չէր գիտեր թէ Ռոմէօ ի՛նչ կապակցութիւն ունէր հանգուցելոյն հետ, բայց գիտնալով թէ նա մի Մոնդակիւ էր և (որպէս կ'ենթադրէր) Գափիւլէդներու մի երդուեալ թշնամին, կը կարծէր թէ նա գիշերոյն եկած էր թշնամանք ընելու մեռեալ մարմնոց, ուստի և բարկացայտ հրամայեց անոր յետս կալ իւր արարքէն, և, իբրև ոճրագործ մը Վերոնայի օրինօք ի մահ դատապարտեալ՝ եթէ քաղաքին պատերուն մէջ գտնէին զինքն, կ'ուզէր ձերբակալել զնա: Ռոմէօ թախանձանօք խնդրեց Պարիսէն որ թողու զինքն, և խրատեց զնա Տիպալտի գլխուն եկած փորձանքն յիշեցնելով, որ անդ թաղուած կար, չգրգռել իւր սրտմտութիւնը, և ուրիշ մեղք մը չհրաւիրել իւր գլխուն վերայ՝ բռնադատելով զինքն սպաննելու զնա: Բայց կոմսն արհամարհանօք մերժեց անոր խորհուրդը, և ձեռք երկնցուց անոր բռնելու համար զնա իբրև օրինազանց, որուն դիմադրելով Ռոմէօ՝ մենամարտեցան, և Պարիս ինկաւ: Երբ Ռոմէօ լուսոյ օգնութեամբ եկաւ նայիլ թէ ո՛վ էր այն զոր սպաննած էր, տեսաւ որ Պարիսն էր, որ (Մանդուայէն գալու ատեն ճամբան լսած էր) պիտի ամուսնանար Ժիւլիէդի հետ, այն մեռեալ երիտասարդին ձեռքէն բռնեց՝ իբր այնպիսի մէկու մը զոր դժբախտութիւնն իրեն ընկեր ըրած էր, և ըսաւ թէ կ'ուզէր թաղել զինքն փառաւոր գերեզմանի մը մէջ, այն է Ժիւլիէդի, զոր առջա կը բանար,— և անդ անկեալ դնէր իւր սիրելին, իբր այնպիսի մին որոյ վրայ մահը չունի զօրութիւն փոխելու դիմքին մէկ գիծն կամ գոյնը իւր աննման գեղոյն մէջ, կամ իբրև այն թէ մահն իսկ սիրահարած լինէր նմա, և այդ կմախային ահռելի ճիւաղն իւր հաճոյքին համար պահէր անդ զնա անարատ. զի անդ կը հանգչէր նա դեռ դալար ու թարմ և ծաղկադեղ. քանզի ըմպելով այն ընդարմացուցիչ ըմպելին՝ թանձր քնոյ մէջ ինկած էր, և առընթեր նորին կը պառկէր Տիպալդ իւր արիւնաթաթաւ պատանին մէջ, զոր տեսնելով Ռոմէօ ներում խնդրեց նորա անկենդան մարմնէն, և Ժիւլիէդի սիրոյն համար խորհրդորդի կոչեց զնա, և ըսաւ թէ շնորհք մը պիտի ընէր նմա ընդ հուպ՝ սպաննելով նորա թշնամին:

Անդ յայնժամ Ռոմէօ իւր սիրելւոյ շրթներէն հրաժեշտի ողջոյն առաւ համբուրելով զայնս, և թօթափեց իւր ձախող բախտին բեռն իւր վաստակեալ մարմնէն՝ կուլ տալով այն թոյնն զոր դեղագործը ծախեր էր իրեն, որոյ ներգործութիւնն էր աղէտալի և իրական, ոչ նման այն պատրող ըմպելւոյն զոր Ժիւլիէդ խմած էր, և որոյ ազդեցութիւն այժմ գրեթէ կսպառէր. ու նա (Ժիւլիէդ) մօտ էր զարթնուլ ցաւելու համար որ Ռոմէօ չէր սպասած կամ թէ չափազանց կանուխ եկած էր:

Վասն զի հիմայ հասած էր ժամն յորում կրօնաւորն խոստացած էր թէ Ժիւլիէդ պիտի արթննար, և ինքն, լսելով որ իւր նամակներն, զորս յղած էր ի Մանդուա, պատգամաւորին անդէպ արգիլմամբն չէին հասած Ռոմէօյի ձեռքն, անձամբ եկաւ, հետն առած բրիչ մ'և լապտեր մը, ազատելու համար զԺիւլիէդ իւր բանտէն. բայց զարմացաւ տեսնելով լոյս մը որ կը վառէր Գափիւլէդներու դամբարանին մէջ, և նորա մօտ սուրեր և արիւն, և Ռոմէօն ու Պարիսն որք անշունչ տարածեալ կային անդ:

Դեռ եղբայր Լաւրենտիոս չէր կրցած ենթադրութիւն մ'ընել բացատրելու համար թէ ինչպէս այդպիսի աղէտալի պատահարք տեղի ունեցած էին, ահա՛ Ժիւլիէդ արթնցաւ իւր թմրութենէն, և զկրօնաւորն տեսնելով իւր մօտ՝ յիշեց թէ ո՛ւր կը գտնուէր և ինչու, և տեղեկութիւն հարցուց Ռոմէօյի մասին. բայց նա, աղմուկ մը լսելով, հրամայեց Ժիւլիէդի դուրս ելնել այդ մահուան և անբնական քնոյ օթեվանէն, վասն զի իրենց խորհուրդքն վեր ի վայր շրջած էին մեծագոյն զօրութեան մը ձեռքով, որուն դիմադրել չէին կրող, և մարդոց ձայներ լսելով՝ փախուցած խոյս տուաւ: Բայց երբ Ժիւլիէդ բաժակը տեսաւ իւր հաւատարիմ սիրականին ձեռաց մէջ, գուշակեց իսկոյն թէ թոյնը եղած էր նորա մահուան պատճառը, և կ'ուզէր ինք ևս նորա վերջին կաթիլներն ըմպել եթէ երբէք կը մնային, և կը համբուրէր իւր սիրելւոյն դեռ ջերմաջերմ շրթունքն փորձելու համար թէ թոյնի մնացորդ մը կը կախուէ՞ր դեռ անոնց մէ. և տեսնելով որ մարդոց ձայնը երթալով կը մերձենար՝ իսկոյն մերկացաւ դաշոյն մը զոր իւր վրայ կը կրէր, և մխելով զայն իւր կուրծ՝ մեռաւ իւր հաւատարիմ Ռոմէօյին առընթեր:

Պահապաններ այս միջոցիս եկան հասան հոն: Կոմս Պարիսի մանկլաւիկներէն մին, որ ականատես եղած էր իւր տիրոջ ու Ռոմէօյի մէջ տեղի ունեցած մենամարտին, դացած խուճապ յարուցած էր, որ շուտով ամէն կողմ տարածուած էր, այնպէս որ քաղաքացիք փողոցներուն մէջ վեր վար ընթանալով կ'աղաղակէին խառն ի խուռն «Ո՜հ Պարիս, ո՜հ Ռոմէօ, ո՜հ Ժիւլիէդ», զի համբաւն խառնաշփոթ և անկատար հասած էր իրենց, մինչև որ աղմուկն իրենց անկողիններէն դուրս բերաւ զՏէր Մոնդակիւ և զՏէր Գափիւլէդ, որպէս և քաղաքին իշխանն, հասկնալ թէ ինչ էր այդ վրդովման պատճառն: Կրօնաւորն բռնուած էր գիշերային պահապանաց մէկ քանիներէն, երբ կը դառնար դամբարանէն դողդոջուն, հառաչներ արձակելով և ողբալով մի կասկածելի եղանակաւ: Մեծ ամբոխ մը կուտեցաւ Գափիւլէդներու դամբարանին մէջ, և իշխանն հարցաքննեց զկրօնաւորն՝ հրամայելով նմա յայտնել ինչ որ գիտէր այս տարօրինակ և աղէտալի արկածից մասին:

Եւ անդ, ի ներկայութեան Տէր Մոնդակիւի և Տէր Գափիւլէդի, հաւատարմաբար պատմեց իւրեանց զաւակաց դժբախտ սիրոյն պատմութիւնը և այն մասնակցութիւնն զոր ինք ունեցաւ նոցա ամուսնութեան մէջ. զոր քաջալերած էր յուսով որ այդ միութեան մէջ վերջ մը գտնէն երկուց տոհմից երկարժամանակեայ թշնամութիւնք և կռիւք: Պատմեց թէ ինչպէս Ռոմէօ, որ անդ կայր մեռեալ, փեսայն էր Ժիւլիէդի, և Ժիւլիէդ, նոյնպէս անշնչացեալ անդ, էր հաւատարիմ հարսն Ռոմէօյի. թէ ինչպէս, դեռ ինք պատեհ առիթ մը չգտած հրապարակելու նոցա ամուսնութիւնն, մի այլ ամուսնութեան խորհուրդ յղացուած էր Ժիւլիէդի համար, որ, երկրորդ ամուսնութեան մը ոճրէն խուսափելու համար, խմած էր թմրեցուցիչ ըմպելին (ըստ իւր խրատուն), և ամէնքն զնա մեռեալ համարած էին: Պատմեց թէ ինչպէս նոյն միջոցին ինք գրեց առ Ռոմէօ գալ և առնուլ իւր հարսն այն վայրկենին ուր դեղին զօրութիւնն պիտի սպառէր և թէ ինչպէս իւր յղած պատգամաւորին ձախող արկածովն իւր նամակը չէր հասած Ռոմէօյի: Աւելի հեռուն չկրցաւ կրօնաւորն տանիլ իւր պատմութիւնն, և ոչ իսկ գիտէր աւելի ինչ քան զայս, վասն զի ինքն ևս գալով ազատելու զԺիւլիէդ մահուան բնակարանէն՝ գտած էր զՊարիս և զՌոմէօ սպանեալ: Մնացորդ տեղեկութիւնքն յաւելցուց մանկլաւիկն պատմութիւնն, որ տեսած էր Պարիսի և Ռոմէօյի մենամարտին, և ծառայն, որ Ռոմէօյի հետ Վերոնայէն եկած էր, և որում այս հաւատարիմ սիրողն տուած էր նամակներ՝ յանձնուելու համար իւր ծնողաց ի դէպս իւր մահուան: Այս նամակք կը հաստատէին կրօնաւոր եղբօր խօսքերն, զի նոցա մէջ Ռոմէօ կը խոստովանէր իւր ամուսնութիւնն ընդ Ժիւլիէդայ, իւր ծնողաց ներողութիւնը կը խնդրէր, և կը յայտնէր աղքատ դեղավաճառէ մը թոյն գնելն ու դամբարան գալով մեռնելու և Ժիւլիէդի քով հանգչելու դիտաւորութիւն ունենալն: Բոլոր այս պարագայք ի միասին գալով փարատեցին ամէն կասկած կրօնաւորին մասին, որ կրնար ենթադրուիլ մասնակցութիւն մ'ունեցած ըլլալ մանաւանդ այս կնճռոտ սպանութեանց ու մահուց մէջ, քան թէ լինէին նոքա լոկ ակամայ հետեւանքն իւր բարենպատակ՝ այլ յոյժ ճարտարամիտ հնարից:

Եւ իշխանն, դառնալով առ ծերունի Տեարս Մոնդակիւ և Գափիւլէդ, կշտամբեց զանոնք իւրեանց գազանային ու անբանաւոր ոխից համար, և ցոյց տուաւ թէ ինչ պատուհաս դրած էր երկինք այդպիսի յանցանաց վրայ, ու միջոց գտած էր իւրեանց որդւոց սիրոյն միջոցաւ պատժելու իւրեանց անբնական ատելութիւնը: Եւ այս ծերունի Տեարք ոչ ևս ոխերիմ, համաձայնեցան թաղել իւրեանց երկարատեւ քէնը իւրեանց զա-

ւակաց գերեզմաններուն մէջ, և Տէր Գաբրիէլ խնդրեց Տէր Մոնդալիէէ տալ իրեն իր ձեռքը, կոչելով զնա եղբօր անուամբ, իբրև թէ ի խոստովանութիւն միութեանն իւրեանց գերդաստանաց՝ ամուսնութեամբ երիտասարդ Գաբրիէլին և Մանուէլին, և ըսելով թէ Տէր Մոնդալիէին ձեռքն զոր (ի նշան հաշտութեան) բան չէր խնդրեր իբրև իր աղջկան բաժնին ինկած մասն ժառանգութեան. բայց Տէր Մոնդալիէ ըսաւ թէ ինք կ'ուզէր աւելին տալ նմա, զի կ'ուզէր նորա արձանը կանգնել համակ ոսկեայ, որպէս զի, ցորչափ Վերոնա պահէր իր անունը, ո՛չ մի պատկեր լինի ա՛յնքան թանկագին իբր ճոխութեամբն ու ճարտարապետաց չքեղութեամբ քան հաւատարիմ և անձնանուէր Ժիւլիէդի։ Եւ Տէր Գաբրիէլ, ի փոխարէն, ըսաւ թէ և ինքն պիտի կանգնէր մի այլ արձան ի յիշատակ Ռոմէօյի։ Այսպէս այս երկու հէք ծերունի Տեարք, երբ կարի ուշ էր, կը ջանային զիրեար գերազանցել փոխադարձ մեծարանաց մէջ, մինչ ա՛յնքան անողոք ու կատաղի եղած էր իւրեանց մոլի թշնամութիւնն անցեալ ժամանակաց մէջ, որ ոչ այլ ինչ բայց միայն իւրեանց զաւակաց աղետալի մահն (հէք զոհք իւրեանց գժտութեանց) կրցաւ խլել արմատացեալ հեան ու մախանս ազնուական այն գերդաստանաց։

Թարգմ. յԱնգղիականէն — Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՃԱՌ (1)

Ազնիւ ամոլք Նորապսակք,

Ահաւասիկ և դո՛ւք լծուեցաք ի լուծ սիրոյ, և դո՛ւք միացուցիք ձեր գլուխներն սիրոյ պսակով։ Ձեռք ձեռքի տուիք, և ուխտեցիք երկնից և երկրի առջև աջակից և անբաժան ընթանալ կենաց ճանապարհը։

Ո՛վ խոր նուիրական, վայրկեա՛ն խորհրդաւոր, ահա է՛ր և սրտաշարժ ու յուզիչ Յուզեալ կայք դուք, յուզեա՛լ և ձեր ծնողք, ձեր ազգականք, ձեր բարեկամք. Թրթռուն են սիրտք, և արտասուք, հոգւոյ խորին գգուանաց յայտարարք, թրջեցին ու կը թրջեն տակաւ բազմաց արտեւանունք. — վասն զի երկու անհատական կեանքերու ձուլումէն նոր կեանք մը կը կազմուի, վասն զի սիրոյ նոր բոյն մը — նոր ընտանիք մը — կը գոյանայ երկնից տակ։

Ի մի ձուլեալ այդ կեանքեր ո՛չ միայն զօրաւորագոյն ու քաղցրագոյն կեանք մը կը յօրինեն, կարող տանելու յաջողութեան յուսով կռուելու կեանքի դժուարութեանց ու դառնութեանց դէմ, այլ և կը դառնան աղբիւր մը նոր կեանքերու, կեանքը երկրիս վրայ շարունակելու, կեանքը տածելու և ծաւալելու գործի մը կը լինին, և կ'առնեն դեր մը արարչական, Նախախնամական։

Ընտանի՛ք մը... ո՛հ, կա՞յ երկրի վրայ բան մը քան զայն աւելի համեստ, այլ և աւելի վսեմ. նման աղբերց և արմատոց՝ աւելի թագուն, այլ և աւելի բեղմնաւոր. խորանի մը պէս՝ աւելի ստուերամած, այլ և աւելի սուրբ. տաճարց պէս՝ աւելի պարզ, այլ և աւելի կենսական։

Հո՛ն օրրանին խորհրդալից քօղերուն մէջ կը ննջէ մանկիկը, ապագայ մարդը, ապագայի այդ խորհուրդը։ Հո՛ն կնոջ ծոցը կեանք կը բղխեցնէ ժպիտը սէր կը ծնուցանէ, շունչը ջերմութիւն կը ծաւալէ, ձեռները վարդեր կը փթթեցնեն, գիրկը կը հանգչեցնէ, ձայնը յուսոյ և սփոփի երգ մի կ'երգէ անդուլ, իսկ ակնարկը զերկին ցոյց կու տայ։ Հո՛ն հայրը, իբրև արև մի խոնջեալ՝ տունջեան ասպարէզէն, կը մտնէ կը մխրճի յերկնային գորովանաց ովկիանի մը մէջ, ելնելու համար՝ ամէն առաւօտ՝ նորոգած իւր աշխոյժն ու հուրը և շարունակելու լուսաւորել. բեղմնաւորել, ապրեցնել։

Ընտանիքներն է, իբրև միլիոնաւոր աղբիւրներէ, կը ծաւալին կենաց կոհակք երկրի վըրայ։ Հացը՝ որ, հօր քրտամբ, երբեմն և արեամբն իսկ շահուած, կը բեկանի ամէն օր ընտանեաց սեղանին վրայ, սիրոյ առաջին ու ամենօրեայ պատարագն է մարդկութեան մէջ։ Ընտանեկան վառարանը, իւր շուրջ ժողովելով զամէն անոնք որք մէկ յարկի տակ ծնան, մարմնոյ մէջէն հոգիները կը տաքցնէ, հոգիներու սառը կը կակղէ, և առաջին խորհրդաւոր կեդրոնն է որոյ շուրջը կը բոլորին. հետզհետէ իրարմէ լայնագոյն, ընտանեաց, ազգի և մարդկութեան սիրոյ շրջանակները։ Կնոջ սիրոյն, հօր անձնուիրութեան և մանկան անմեղութեան մէջէն մանաւանդ կը նայի մեզ Նախախնամութիւնը։ Աստուած ուզած է որ ընտանիքն ըլլայ առաքինութեան մեծագոյն դպրոցը և ժողովուրդներու ազնուացման գերագոյն սատարը։ Նա ընտանիքներով կը պահէ ազգերը։

Արդարև արարչական վայրկեան մ'է այս. կեանքէ մեծ բան մը կ'ստեղծուի այս վայրկենիս. — կենաց աղբիւր մը։ Սէրը, ամէն ստեղծագործութեան և երջանկութեան այն խորհրդաւոր սկիզբն, վառարան մի ևս կը կերտէ ինքեան. — ընտանիք մը։ Իրաւունք ունեցաւ ապա Եկեղեցին իւր վեհ կնքովը կնքելու ա՛յսքան վսեմ միութիւն մը, իւր քաղցրագոյն երգերովն ու սրբագոյն աղօթիւք նուիրագործելու այսքան սուրբ ուխտադրութիւն մը։ Հաճութեամբ անտարակոյս ակնարկեց յերկնից յայս հանդէս և այն Էակն անհուն, որ գերագոյն Աղբիւրն է կենաց և Սիրոյ, որ ի քն իսկ կազմեց առաջին ընտանիքն առաջին Եդեմին մէջ — զի ամէն ընտանեկան յարկ մէն մի Եդեմ է՝ ցորչափ պահէ իւր սրբութիւն —, և որ այրն ու կին ըրաւ ա՛յնպէս որ ապրելու համար միմեանց պէտք ունենան և միմեամբք լինին կատարեալ։ Ի մէն մի հանդէս հարսանեաց կրնան ապա կրկնուիլ այն բանք վսեմք որովք Սուրբ Գիրք կը բացատրեն աստուածային հաճութիւնն ի տեսիլ իւր արարչագործ կամաց գեղեցիկ արդեանց — «Եւ ետես Աստուած զի բարի է։»

Բայց ի մէջ ամէն հարսանեաց այսպիսեա՛ց համար մանաւանդ պիտի կրնային պատշաճագոյնս կրկնուիլ աստուածեղէն այս բանք, այսպիսեաց համար ուր նոքա որք կը միանան՝ ա՛յնքան պատշաճ են միմեանց մօք և սըրտիւ, ուր երկու ընտիր հոգիներ միմեանց կը պատահին՝ յիրեար զուգել իւրեանց ազնիւ բարեմասնութիւններ, ուր ոչ ինչ օտարոտի նկատում կը պղծէ սրբութիւնն նպատակին որոյ համար հա՛րկ է որ բոլորի ամէն պսակ հիմնեան, ուր այրն ու կին միանգամայն գիտակցութիւնն ունին պարտուց զոր իւրեանց վերայ կը դնէ այս միութիւն և կարևոր առաքինութիւնքն ու իմաստութիւնն՝ կատարելու համար այդ պարտքեր. և ուր վերջապէս ընտանիքն կը կազմի այնպիսի պայմաններու մէջ որք կը ներեն իրեն պատսպարանել ընտանիքի հարուստ(?) և իրացնել երանութեան և բարեաց այն խոստումներ, որոց խորհրդանշանն թուին լինել այն սպիտակ ծաղկունք որք հարսին ճակատը կը զարդարեն։

Այս, սա արժանիքը կը գրկէ զոր անխոնջ, չքնաղ ձիրքեր կը միանան միմեանց փայլն յաւելցնելու։ Ընտիր ուսուցիչ մը, պատիւ իւր ասպարէզին և այն հաստատութեանց ուր կը դաստիարակէ, կ'ընտրէ իւր կենաց ընկեր մի ընտիր ուսուցչուհի, ազգին իգական սեռի կրթութեան բարձրագոյն հաստատութեան — Մէզպուրեան վարժարանի — Նախ սանն և ապա մին ամենէն օգտակար ու սիրեցեալ դաստիարակուհիներէն։ Ու միմեանց օժիտ, դուք, ազնիւ ամոլք, կը բերէք ձեր սէրն ու անձնուիրութիւնը, ձեր առաքինութիւնքն ու տաղանդներն, ձեր պարկեշտ երիտասարդի և երիտասարդուհւոյ անաղարտ անբիծ համբաւները և ձեր ոգին աշխատասիրութեան։ Ահա՛ օժիտք որք պատուական են քան ամէն գանձեր նիւթական և որք ճշմարիտ ու ապահովագոյն պայմանքն են ամէն ընտանեկան երջանկութեան։

Տիպար ընտանիք մը կազմելու սահմանեալ էք դուք, և վստահ եմ թէ պիտի կազմէք, զի ունիք ա՛ռ այդ կարևոր ամէն հանգամանքներ։ Դուք որ եղաք ա՛յնքան լաւ ուսուցիչ՝ անտարակոյս պիտի լինիք և պատուական հայր ու մայր, և այդ ալ առաջին պայմանն է լինելու երջանիկ ծնողք, հայր եւ մայր որդւովք բերկրեալ։

Ահա է՛ր և մեք, ձեր բարեկամք, վկայ մի այսպիսի ներդաշնակ, գեղեցիկ և բարեգուշակ միութեան, հրճուանօք կը շրջապատեմք զձեզ ձեր կենաց այս խորհրդաւոր պահուն. ահա է՛ր և ես, ուսուցիչն ըլլալէ յետոյ այս նորակազմ ընտանիքի գլխոյն, ինքնաբեր և խնդալից, փութացի կենակցիս հետ գլխաւոր վկայն ըլլալ ձեր հոգիներու այս հանդիսաւոր ուխտին. — վասն զի վըստահութեամբ կրնայի ըսել ձեզ. «Մտէք դըռնէն ներս այն տան զոր կը հիմնէք. Սէր եւ Հաւատարմութիւն, Աշխատութիւն և Բաւականասիրութիւն անոր քառեակ անկիւնաքարերը պիտի ընէք. քա՛ջ է, մտէ՛ք աներկեան. Ներդաշնակութիւնն անդ պիտի տիրէ. գոհունակութիւն ի նմա պիտի բնակի, և երջանկութիւնն, այն որ առաքինութենէ կը ծնանի, ա՛նդ պիտի հաստատէ իւր գահը։»

Այս ոգևորեալ համակրութիւնն, արդիւնք ձեր արժանեաց, որ զձեզ կը պատէ և որ այս անձուկ շրջանակէն շատ աւելի հեռուն կը տարածի, պիտի հետևի ձեզ ձեր նոր կեանքին մէջ և պիտի լինի գեղեցիկ շրջանակն այն ընտանեկան երջանկութեան նկարին զոր կ'երթայք յօրինել։ Տեսէ՛ք, ի՛նչ իղձեր ձեզ կ'ընկերանան. մատաղ ձեռներ, զորս գրել մարզեցիք, ծաղիկներ կը սփռեն սեմոց վերայ ձեր սիրոյ տաճարին ուր ահա՛ կը մտնէք ձեռն ի ձեռն, և անմեղ բերաններ, ոյց խօսիլ ուսուցիք, երկնից օրհնութիւնը կը մաղթեն ձեր գլխոյ վերայ զոր սուրբ պսակը միացուց։

Մեր ամենուն սիրտք ձայնակից են այս ըղձից և կը մաղթեն որ ոչ երբէք պակասի ծաղիկը ձեր ոտից տակէն և ո՛չ երբէք երկնից ժպիտը ձեր գլխոյ վրայէն։

1890 Դեկտ. 17 — Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

(1) Ազն. Ռ. Էֆ. Պէրպէրեան այս բարոյալից բանախօսութիւնն արտասանած է «Ծաղիկ Մանկանց» հանդիսի Տնօրէն խմբագիր Միհրան Էֆ. [illegible] Մէզպուրեան վարժարանի ընտիր դաստիարակուհիներէն Օր. Կարաինէ Յակոբեանի հետ ամուսնութեան հանդիսին առթիւ։ Կը հրատարակեմք իբրև գրական գեղեցիկ հատուած մը։ Ծ. ԽՄԲ.

ԹԷ ԻՆՉ ԿԱՐՈՂ Է ԸՆԵԼ ՄԱՐԴ

—

Այսօր 184րդ ծննդեան տարեդարձն է Ամերիկայի Միացեալ-Նահանգաց ընդարձակ հանրապետութեան հիմնադիրներէն միոյն, Բենիամին Ֆրանքլինի ։ Ինքնօգնութեան այդ հոյակապ օրինակը 1706ին Պոսթընի մէջ, իւր հօրը՝ խեղճ աճառագործի մի խանութին յետնակողմը ծնաւ ։ Կարդալ, գրել և հաշուել միայն գիտէր՝ երբ տպարանի մը մէջ աշակերտութեան մտաւ ։ Արհեստին բերմամբ ընթերցասիրութեան փափաքն աւելցաւ իւր մէջ, և ժողովրդական բանաստեղծութիւններ ու ընթացիկ յօդուածներ գրել սկսաւ ։ Իւր աշխատասիրութեան և խնայողութեան շնորհիւ 1729ին յաջողեցաւ տպարան մը բանալ ի Ֆիլատելֆիա, բարոյական, գիտական և քաղաքական ակումբ մը կազմակերպեց քաղաքին մէջ, և լրագիր մի հիմնեց յորում բանիմաստ և սահուն գրչով գաղթաշխանութեան (1) շահերը խորհրդածելով, իւր հայրենակցաց քաղաքային կրթութիւնն ստանձնեց ։ 1732ին Ճինական Ռիչարս անունով տարեցոյց մը հրատարակեց որ ռամիկ դասուն ընծայեց այն օգուտները զոր իւր թերթը կը ջամբէր լուսաւորեալ դասուն ։ 1736ին Բէնսիլվանիոյ Ընդհ. Ժողովոյն անդամ կարգուելով. յաջորդ տարին Ֆիլատելֆիոյ թղթատարական տնօրէն անուանեցաւ ։ Ցայնժամ սկսաւ իւր իրական գործունէութիւնը. հանրային հանգանակութեամբ գաղթականութեանց առաջին մատենադարանն հիմնեց, հասարակաց կրթութեան ծրագիր մի գծեց, ուսումնական կաճառ մի հաստատեց, հիւանդանոցի մը հիմնարկութեանը մեծապէս սատարեց, ջրհանկըրաց խումբ մը կազմեց և հրդեհի դէմ ապահովագրական ընկերութիւն մը կազմակերպեց ։ Քիչ ժամանակի մէջ իւր բաղդը շինելով, անդադ եռանդեամբ մ'ուսնիլ սկսաւ, և ինքնին Ֆրանսերէն, Իտալերէն, Սպաներէն և Լատիներէն սովրեցաւ, բայց ամենէն աւելի բնական գիտութեանց հետամուտ էր ։ 1753ին Բէնսիլվանիոյ թղթատարական ընդհանուր տնօրէն կարգուեցաւ ։ 1757 և 1764ին, երկու անգամ իւր գաղթականութիւնը ներկայացուց ի Լոնտոն, պաշտպանելու համար նորա իրաւունքը Բէն (2) ընտանեաց դէմ, որք կ'ուզէին հասարակաց յարձակումներէն ազատիլ ։ 1766ին յաջողութեամբ գծեց դրոշմատուրքի այն օրինագիրքն որուն կ'ուզէր Անգղիական կառավարութիւնը ենթարկել զԱմերիկա ։ 1769ին, թէյի վրայ դրուած նոր տուրքին յառաջ բերած վրդովմանց ժամանակ, գաղթականութեան շահուն հակառակող ընդհանուր կառավարչին նամակները գտնելով և հրատարակելով, ընդհանուր տնօրէնութեան պաշտօնը կորսնցուց ։ 1774ին դարձեալ Անգղիա երթալով, Ամերիկայի և մայր-հայրենեաց միջև հաշտութիւն գոյացնել փորձեց. բայց անձն ի վտանգի տեսնելով, գաղտնի Ամերիկա դարձաւ ։ Վեհաժողովոյն անդամ ընտրուելով, Վաշինկթոնի հետ իւր երկրին պաշտպանութեանը միջոցները կազմակերպել խորհեցաւ ։ Ֆրանսայի օգնութիւնն հայցելու համար վեհաժողովոյն ընտրած անձըն էր Ֆրանքլին, որ 1778ին՝ Լուի ԺԶ էն մին պաշտպանողական միութեան և միւսն առեւտրական երկու դաշնագրեր ստանալու բաղդն ունեցաւ ։ 1783ին Միացեալ Նահանգաց ազատութիւնն ապահովող խաղաղութեան դաշնագիրը ստորագրողներէն մին ալ Ֆրանքլին էր ։ Մինչև 1785 ի Ֆրանսա լիազօր ներկայացուցչի կարեւոր պաշտօնը վարեց և, արդէն ութսնամեայ և տկարացեալ, հրաժարելով դարձաւ ի հայրենիս ուր մեծ ցնծութեամբք ընդունուեցաւ ։ Ցայնժամ իբր երեք տարի հասարակաց գործերով զբաղեցաւ, և Ֆիլատելֆիոյ Գերագոյն ժողովոյն անդամութեան և Բէնսիլվանիոյ նահանգին նախագահութեան պաշտօնները վարեց ։ Իւր մահուան համար Ամերիկա ամիս մը, և Ֆրանսայի Սահմանադրական ժողովը 3 օր սուգ պահեցին ։

Իւր անունը մնացած է Միացեալ-Նահանգաց 97 քաղաքներու, որոց նշանաւորն կը գտնուի Նիւ-Ճէրզէյ նահանգին մէջ (3870 բնակիչ) ։

Ֆրանքլին բարձր քաղաքագիտաց դասուն մի կարեւոր անդամն լինելէ զատ, նշանաւոր գիտնոց շարքին մէջ ալ փայլուն դիրք մը գրաւած է ։ Դրական և ժխտական ելեքտրականութեան և կայծակին ու ելեքտրական հոսանաց նմանութեան վրայ գրած աշխատասիրութիւններն մեծամեծ գիտնոց սքանչացման նիւթ եղած են ։ Սլաքներուն՝ ելեքտրականութեան հոսանքն ի հեռուստ և յուշիկ իրենց քաշելու զօրութեան վերահասու լինելով, յաջողեցաւ գտնել շանթարգելը ։ Ցեւրոպա ըրած ճամբորդութեանը միջոցին երբ Ովկէանէն կ'անցնէր, գիտեց որ լայնութեան մինոյն ստորճանին ներքեւ՝ ծովուն հոսանուտ մասունք անշարժ մասերէն աւելի ջերմ են. այդու միջոց մի հնարեց որով նաւապետք դիւրաւ կրնան հասկնալ թէ հոսանքի մը մէջ կը գտնուին ։ Ծոճման ենթակայ ապակիներուն արտադրած ձայները, ըստ իրեանց թանձրութեան աստիճաններուն դիտելով, ներդաշնակային նուագարանը (արմոնիքա) գտաւ ։ Մանկլըզերու բացուածքներէն յառաջ եկած ջերմութեան կորուստը՝ գոյ վառարաններուն արտադրած հեղձուցիչ տաքին հետ բաղդատելով, երկու դրութիւններն ի մի ձուլեց և ծխնելոյզ ըստ Ֆրանքլինի կոչուած դիւրին եղանակը հնարեց ։

17 Յունվար 1891 Վ. ԳԱԼԲԱՔՃԵԱՆ

(1) Միացեալ-Նահանգք իրենց անկախութենէն առաջ՝ 13 մասերու բաժնուած՝ Անգղիոյ մէկ կարեւոր գաղթականութիւնը կը կազմէին ։ 1776 Յուլիս 4ին անկախութիւն հրչակուեցաւ զոր Լոնտոնի դաշնիքն ընդունեց 1783 Սեպտեմբեր 3ին ։

(2) Վիլիամ Բէն, հասարակաց շահուն վնասող օրէնքներ հաստատած էր ի Բէնսիլվանիա (1644—1718 ։)

ՏՈՒԲԹ. ՍԱՖՐԷՅ. Երկար ապրելու միջոցները. Սկզբունք Առողջաբանութեան. Թարգ. Աչագուրկ Թադէոս Կէզիւրեան ։ — Ամէն դասու, վիճակի, հասակի և սեռի անհատից համար հաւասարապէս օգտակար աշխատասիրութիւն մ'է, իբրև կենաց ճշմարիտ ուղեցոյց ։ Խրթին բառերու բացատրութեանց համար յաւելուած մ'ևս կը պարունակէ ։ Երես 294. Տպ. Ճիվէլէկեան ։ Գին 10 ղրշ ։

Կը ծախուի գրավաճառաց, Պահճէ-Գափուի ջրավաճառաց և Ուզուն-Չարշը պաշը, Թիւ 402, Փալագաշեան Փորագրատունը ։ 5—1

—

ՍԻՐՈՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ մանկանց և պատանեաց համար. Պատկերազարդ. Թարգ. Ա. Թ. Կէզիւրեան ։ Երես 80. Տպ. Գրաշարաց Ընկ ։ Գին 100 փր ։ Կը ծախուի գրավաճառաց քով և Ուզուն-Չարշը պաշը, Թիւ 402, Փալագաշեան Փորագրատունը ։ 2—5

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստափառ Սուլթանն Իւր անսահման բարեգթութեամբ հաճած է ներումն շնորհել նաեւ տասն եւ մէկ Հայ բանտարկելոց, որք են

1. Ցակոբ Շաւարշ (Երզնկացի),
2. Հովանոցավաճառ Պօղոս Ն. Քիւրքճեան,
3. Տիվրիկցի Կիրակոս,
4. Սեբաստացի Կարապետ Խ. Զաքըրեան,
5. Ի Նիկոմիդիա խահուէճի Ամասիացի Գրիգոր,
6. Նիկոմիդիացի կօշկակար Մօրուք Յովհաննէս Հայրապետեան,
7. Պոլսեցի ժամագործ Մաղսուտ Պալիկեան,
8. Բարչաճը Նիկողոս Կոկանեան Մեծ Արմըտանցի,
9. Արապկիրցի Առաքել Գարեգին,
10. Բաղէշցի ըէնչպէր Պետրոս,
11. Պէշիքթաշի եկեղեցւոյն ժամկոչ Բիւզանդ ։

Երեքշաբթի այս արձակեալք ժամը 10ին միջոցները Պատրիարքարան գրկուելով, Մայր Եկեղեցւոյ մէջ՝ ի ներկայութեան Աշըգեան Ս. Պատրիարք Հօր և Ոստիկանութեան Նախարար Վսեմ. Նազըմ պէյի, Ս. Աւետարանը համբուրեցին և կայս. կառավարութեան հաւատարիմ մնալ ուխտեցին՝ ճիշդ այն արարողութեամբք որք տեղի ունեցան Ս. Ծննդեան Խթման օրը արձակուողներուն համար ։

— Գաւառական առաջնորդներէ և Բաղ. ժողովներէ երախտագիտական հեռագրեր կը շարունակեն գալ Պատրիարքարան, ի պատասխանի Ամեն. Ս. Պատրիարք Հօր այն հեռագրոյն որով կը ծանուցանէր Հայ բանտարկելոց ներումն շնորհող կայս. Իրատէն ։

— Ամեն. Խրիմեան Սրբազան տարեգլխէն առաջ. Ս. Երուսաղէմ հասեր և բնակութիւնն հաստատեր է Ս. Յակոբայ վանուց մէջ ։

— Վեհ. Սուլթանը Դ. կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհած է Եգիպտոյ Պատր. Փոխանորդ Արժ. Եղիշէ Ծ. վարդ. Այվազեանի և Երուսաղիմայ թեմն եղող Լաթաքիոյ ու շրջակայից հոգևոր տեսուչ Արժ. Թադէոս վարդապետի ։

— Ի Փարիզ յունվ. 6ի առաւօտուն հայկական առաջին պատարագն հայկական մատուռան մէջ կատարեր է Արժ. Տ. Սահակ Քահանայ Իւթիւճեան ։ Մատուռը վարձեր է բարեպաշտ ազգային մը, տարեկան 1000 ֆրանքով ։ Ներկայ գտնուեր են 100է աւելի երկու սեռէ ազգայինք ։ Որոշուած է Ս. Պատարագ մատուցանել ամէն կիւրակէ ։

— Գոհութեամբ կը լսենք թէ Ազգ. Կեդրոն. Վարժ. վարչութիւնը ի նկատ առնելով հանգուցեալ Գուրտեան Կարապետ և Ստեփան աղայից ժառանգորդաց խնդիրքը, ի մօտոյ վերջնական և հաշտարար լուծում մը պիտի տայ յիշեալ կտակէն ծագում առած խնդրոց և գոհացնելով այս կերպիւ բոլոր շահակիցները, միանգամ ընդ միշտ պիտի կարգադրէ այս խնդիր որ Ազգ. իշխանութիւնը կ'զբաղեցնէ պարբերաբար ։

— Այս երկուշաբթի (14 յունուար) դպրոցական պարզ հանդէս մի կատարուեցաւ յՍկիւտար Մեզպուրեան Օրիորդաց ուսումնարանին մէջ՝ Ազն. Մեզպուրեան Միրտիչ էֆէնտիի անուան տօնադարձին առթիւ ։ Ամեն. Տ. Մելքիսեդեկ Սրբազան Մուրատեանց կը

նախագահէր հանդիսին, շուրջն ունենալով վարժարանին ուսուցչական մարմինն։

Սոյն անուան տօնախմբութիւն նոր առիթ մ'եղաւ Մեզպուրեան սանուհեաց համար՝ երախտագիտական ցոյցեր ընելու ի պատիւ իրենց բազմարդիւն Տնօրէնին, առ որ ուղղեցին սրտաշարժ ճառեր, յորս կը յիշեմք ողբացեալ գրագէտ Տօքթ. Ներսէս Մեզպուրեանի դստեր Զարուհի Մեզպուրեանի ճառն՝ որ դեռատի օրիորդին երախտագէտ սրտէն բղխած արտասուօք ընդհատեցաւ։ Վարժարանին շրջանաւարտ սանուհիներէն 40է աւելի Օրիորդք եկած էին իրենց կրտսեր քոյրերուն հետ կատարել այս հանդէս զոր իրենք իսկ կազմակերպած էին նախորդ տարիներ՝ մի և նոյն ազնիւ զգացմամբ։ Դեղեցիկ խրատական մը խօսեցաւ այս առթիւ Մեզպուրեան էֆէնտի, և Սրբազան նախագահը փակեց հանդէսը՝ պերճիմաստ բանիւք և օրհնութեամբք։

Պետրոս էֆ. Քէրէստէճեան և Մէլիքեան ընտանիքներն իրենց խորին շնորհակալութիւններն կը յայտնեն ամէն անոնց որոնք ներկայ գտնուելու բարեհաճեցան ողբացեալ ՄԷԼԻՔԵԱՆ ՏԻԿԻՆ ՅՈՒԼԻԱՆԷի յուղարկաւորութեան հանդիսին։

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ.

Կ. Պոլիս, Պանճէ Գաբու, ճէլալ պէյ խան թիւ 10

Սոյն հանրածանօթ վաճառատուն ձմեռուան առթիւ ճավայէն բերել տուած է զանազան տեսակ ազնիւ և ընտիր թէյեր, ինչպէս նաև այլ և այլ մեծութեամբք ու ձևերով նկարազարդ տուփեր որք կազանդի առթիւ կրնան իրրև նուէր ծառայել։ Գիները որոշ և չափաւոր։ Ցանձնարարութիւնք փութով և ճշդութեամբ կը կատարուին։ 4—8

ԱՐՇԱԿ ՋԱՆԵԱՆ

ԿՕՇԿԱԿԱՐ

11, Պանճէ-Գաբու, 11

Պատրաստ կը գտնուին և յանձնարարութեամբ կը շինուին արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ կօշիկներ։

Խնամեալ ապրանք

ԽԻՍՏ ՁԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐԸ 5—8

Բազմահմուտ Հայ բժիշկ Պ. Ռէստէնի աշխարհարար 6 հատոր «Կրթութիւն բժշկական արուեստի» անուն գիրքն, որ քսան տարիէ ի վեր բոլորովին սպառած էր, Մարգարեան գրատունը կրցած է գտնել միայն 10 օրինակ և կը վաճառէ ի գին 10 Ֆռանքի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ցեսադարձ ակնարկ մը 1890 տարւոյ անցից վերայ

1890 տարին որ այլ ևս պատմութեան կը վերաբերի, խաղաղ տարի մ'եղաւ Եւրոպայի համար և յուսեաս անձանց երկիւղները խաղաղութեան պահպանման նկատմամբ անգամ մ'ևս ի դերև ելան բարերաղդաբար։ Պ. տը Պիզմարք զոր լրագրաց ոմանց չողոքորթութիւնը երկաբեայ նախարարապետ անուանած է, և զոր Գերմանիոյ երիտասարդ կայսրը հանգստեան կոչեց անցեալ տարւոյ ընթացից մէջ, առիթ չունեցաւ այլ ևս Բայիսթակին կամարները հնչեցնելու իր պատերազմաշունչ և սպառնալից ճառերովը, և ահ ու սարսափ ազդելու իր դրացեաց։ Նոյն ինքն Պ. Քրիսպի հարկ տեսաւ աւելի դիւանագիտական լեզու մը գործածել իր ծանուցագրաց և յարաբերութեանց մէջ՝ երբ տեսաւ թէ իր հըզօր դաշնակից Գերմանիա իր նախարարապետին հետ միանգամայն իր քաղաքականութիւնը փոխած էր։ Արդարև զօրավար Քաֆրիվի փոխանակ իր նախորդին նման երբեմն Ֆրանսայի, երբեմն Զուլցերիոյ և երբեմն Ռուսիոյ հետ վէճ յարուցանելու, Վիլհելմ կայսեր հրահանգաց համեմատ իր բոլոր ուշադրութիւնը նուիրեց ներքին և ընկերական կենսական խնդրոց լուծման, և ջանաց Ֆրանսայի հետ իր երկրին յարաբերութիւնները բարւոքել, նախ յոյժ սիրալիր ընդունելութիւն մ'ընելով գործաւորական դեսպանախորհրդոյ մէջ Ֆրանսական ներկայացուցչին, Պ. Ժիւլ Սիմոնի, և յետոյ ճանչելով Ֆրանսայի իրաւունքները Մատակասքար կղզւոյն վրայ։ Այս դէպքեր բաւական բարւոքեցին Ֆրանսայի և Գերմանիոյ յարաբերութիւնները որք յոյժ ձգտեալ էին յառաջագոյն և այդ երկու ազգաց միջև պատերազմի պատահականութիւնը հեռացուցին։

Սակայն Գերմանիոյ այս բարեկամական ցոյցերը բոլորովին համազած չեն թուիր Ֆըրանսա որ նախորդ տարւոյ ընթացից մէջ շրջունակեց ամրողջացնել իր զինուորական կազմակերպութիւնը բազմաթիւ նոր օրէնքներով, և շատ պարագայներու մէջ ցուցուց թէ հրաժարած չէ բնաւ ի հարկին Ռուսիոյ հետ դաշնակցելու խորհրդէն։ Այս քաղաքականութիւն հարկ մը թուի լինել Ֆրանսայի համար, քանի որ Վիլհելմ կայսեր նորածին որդւոյն մկրտութեան արարողութիւնը յորում ներկայ գտնուեցան պաշտօնապէս Աւըստրիացի և Իտալացի իշխաններ, կը ցուցնէ թէ երբեակ նիզակակցութիւնը դեռ կայ ու կը մնայ։

Բայց Ֆրանսա ինքզինք բաւական զօրաւոր կ'զգայ անխռով դիտելու այս ամէնը և ամէն պատահականութեանց միշտ պատրաստ գտնուելով հանդերձ, իր գաղթականութիւնները կազմակերպելու և դրաւելու այն ամէն նոր երկիրներն (Սենեկալ, Սուտան և.ն.) որք Ափրիկէի բաժանման մէջ իրեն բաժին ինկան։ Եւ յիրաւի Հասարակապետական կառավարութեան դիրքը վերջին տարւոյ շրջանին մէջ զգալի կերպիւ զօրացաւ, շնորհիւ իր դիւանագիտական յաջողութեանց և ընդդիմադիր կուսակցութեանց պարտութեանց, որոց վերջինն է Ծերակուտական ընտրութեանց մէջ Հասարակապետականաց տարած նոր և վճռական յաղթութիւնը։

Զեմք ուզեր խօսիլ նաև վերջին փոխառութեան վրայ որ անգամ մ'ևս ցուցուց Ֆրանսական գանձուն վայելած նախանձելի վարկը։

Այսպէս ուրեմն 1890 տարին Ֆրանսայի և մանաւանդ հանրապետական կառավարութեան համար յաջող տարի մ'եղաւ այնպէս որ Պրք. Ֆրէյսինէ, Բուվի է, Բիսլօ կրնան պարծանօք ըսել թէ իրենց ժամանակը ընդունայն չ'անցուցին։

Սակայն Եւրոպական շատ մ'ուրիշ ազգեր նոյն խաղաղ վիճակը չունեցան։ Հոլանտա կորոյս իր ժողովրդական և ժողովրդասէր վեհապետը, ծերունի Վիլհելմ Գ. թագաւորը և այս առթիւ Լիւքսանպուրկէն բաժնուեցաւ։ Փորթուկալի փոքրիկ բայց արի ժողովուրդը Մոզամպէքի տիրապետութեան առթիւ վտանգաւոր վէճի մը բռնուեցաւ Մեծին Բրիտանիոյ կամ լաւ ևս Լորտ Սալիզպրիի հետ որ Ափրիկէի մեծագոյն և լաւագոյն մասերուն տիրելով հանդերձ, աչք կը տնկէ Փորթուգալի աղքատիկ գաղթականութեանց։ Այս վէճ դեռ կը տևէ և կրնայ խիստ վտանգաւոր հետևանքներ ունենալ այդ համակրելի փոքրիկ ազգին համար։ Ինչ կերպիւ որ կը վարուի Անգլիա Փորթուկալի նկատմամբ, գրեթէ նոյն կերպիւ կը վարուի Միացեալ Նահանգաց կառավարութիւնը Անգլիոյ հետ՝ Ամերիկայի ծովերուն մէջ ձկնորսութեան իրաւունքը զլանալով Անգղիացւոց։ Այս վէճ բաւական մեծ ձգտում մը յառաջ բերած է երկու համացեղ ազգաց յարաբերութեանց մէջ։ Սակայն Անգլիա գիտէ զիջում ընել ուր չէ կարող բռնութեամբ գործել։

(շարունակելի)

Գ. Զ.

1891 Յունվ. 15

Առ Վաղարշակ

«Ծաղիկ»ի 16երորդ թուոյն մէջ մեծաւ զարմանք կարդացուեցաւ «ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ ՊԱՏԿԵՐ ՄԸ» վերնագրով ձեր մէկ յօդուածը, որուն նիւթն էր շրջանաւարտը։

Զը գիտեմ թէ իրր պարզ նորավէպ մը թէ իրր իրական պատկեր մը գրած էք զայն, բայց անշուշտ այս վերջինը լինել կը թուի, վասն զի ձեր նիւթին դիւցազին վիճակը մասամբ իւիք կը նմանի իմ վիճակիս (¹)։ Սամաթիոյ վարժարանը տասնեակ տարիներ առաջ Գառնիկ անուն միայն մէկ շրջանաւարտ ունեցած է։ Որպէս զի ընթերցողը չը կարծէ թէ ձեր գրածը ճշմարտութեան վրայ հիմնեալ է, արժան համարեցի երկտողիս պատասխանել ձեզ։

Ես արդարև Սահակեան վարժարանէն շրջանաւարտ եղած և յետոյ Միլքիէի նախնական վարժարանը յաճախելով՝ Մէարիֆի նախարարութենէ վաւերացեալ վկայագիրս ստացած, այժմ ալ օրինաւորապէս կը յաճախեմ բժշկական վարժարանն, և կը յուսամ թէ աշխատութեամբ պիտի կարենամ ապագային Ազգին եւ Տէրութեան դուզնաքեայ ծառայութիւն մը մատուցանել. սակայն երբէք դեղագործութեան աշխատած չ'եմ, այլ

(¹) Մեզ կը թուի թէ ի զուր ձեզ վերագրած էք Վաղարշակի գրութիւնը և վիրաւորուած։ Բայց քանի որ այդ վիպաձև գրուածքին հերոսը զձեզ կը համարիք, կը հրատարակեմք ձեր պատասխանը՝ խնդրոյն հետ առնչութիւն չ'ունեցող մասերն յապաւելով, և գրուածքը համառօտելով։

Ծ. ԽՄԲ.

պարապոյ ժամերս միայն նուիրած եմ գեղագործութեան արհեստին, որ ոչ միայն զուգրնթաց է բժշկութեան այլ ապագ ՝ին ինչ ինչ կէտերու նկատմամբ շատ օգտակար է բժշկի մը համար։ Առ այս ապացոյցք են Քըրիսեան և Անուշեան Լֆլենթիներու գեղարանք, որոց եթէ դիմէիք կարենայիք տեղեկանալ թերևս թէ արդեօք վարձո՞ւ փոխարէն կ'աշխատիմ թէ՝ յոգուտ անձիս։ Հօրրս մեռած լինելն ալ սխալ է. նա ողջ է և իւր շնորհիւ կ'ապրիմ և կ'ուսանիմ։

Փափաքելի էր որ այսու հետև զգուշանայիք սխալ տեղեկութիւններէ և ընթերցասէր հասարակութեան նուիրէիք շահեկան գրութիւններ։

ԳԱՌՆԻԿ Յ. ԱԿՈԲԵԱՆ
Շրջանաւարտ Սանակեան վարժարանի
եւ ուսանող բժշկական կայսերական համալսարանի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կէս-գիւանագիտական միջադէպ մը պատահեցաւ ի Սամսոն։

Ամերիկայի հիւպատոսական գործակալը քանի մը սնուցիկ Ամասիոյ գօնեակ պիտի ղրկէր Ֆրանսական հպատակ իւր մէկ բարեկամին յ'Իսթանպոլու։ Իւր պաշտօնէից մին մաքսատուն զրկեց հարկ եղած ձեւակերպութիւնները կատարելու համար։ Մաքսատան պաշտօնեայք տեսնելով անոնց պարունակութիւնը՝ նաւ դնելու արտօնագիրը տրուեցաւ. յաջորդ օրը Սամսոն հանդիպելիք շոգենաւին համար։ Իրիկուան դէմ եկան իմաց տալ հիւպատոս. գործակալին թէ քաղաքին ոստիկանութեան պետը սնուցիկները բանալ տուած էր, կասկածելով որ զէնք և վառօդ կը պարունակեն։

Հիւպատոս. գործակալն իսկոյն կառավարչին ըղձագիր մը ղրկեց ոստիկանութեան պետին և մաքսատան միւսիրին այս ընթացքին դէմ։ Այս վերջինը գիանալով հանդերձ սնուցիկներուն բուն պարունակութիւնը, յարմար չէր դատած ընդդիմանալ կատարելի խուզարկութեան որ օտար ազգի մը յարգելի ներկայացուցչին պատուոյն կը դպչէր։ Ոստիկանութեան պետը եկաւ ներումն խնդրել հիւպատոս. գործակալէն, սակայն սա չընդունեց և տեղեկագիր ուղղեց Կ. Պոլսոյ ամերիկեան դեսպան Պ. Հիրշի։ Դեսպանատան բողոքանաց վրայ, Բարձր. Մեծ Եպարքոսն այս մասին հեռագրաւ մանրամասն բացատրութիւն պահանջած է Սամսոնի կառավարչէն։

(Ադամպուլ)

— 4% տոկոսաբեր արժեթղթոց տպագրութիւնն աւարտած լինելով, յանձնուեր են ելեմտական նախարարութեան ի Լոնտոն գտնուող ներկայացուցչաց։

— Կայս. բժշկական ընկերութեան վերջին նստին մէջ, Տօքթ. Քոխի գիւտի միւսին թեր ու դէմ վիճաբանութիւն տեղի ունենալով, ժողովը չը կրցաւ որ և է եզրակացութեան յանգել՝ ի նպաստ կամ ընդդէմ Քոխեան գիւտին։

— Այսընի նահանգին մէջ այս օրերս տեղացած ոստիկ անձրևաց պատճառաւ գետերը յորդելով, մեծամեծ վնասներ պատճառած է և բազմաթիւ անասուն զոհ գնացած են։ Վեհ. Սուլթանն իմանալով այս արկածը, դրամական պարգև մ'ըրաւ ողողելոց և միանգամայն հրամայեց նպաստ հաւաքել ու հասցընել անոնց։

— Ուրբաթ գիշերուան փոթորիկը բազմաթիւ վնասներ հասցուց։ Եէսի Գուլէի կազարանն ևս դադրեցաւ գործելէ. վասն զի մեծ կաթսային կափարիչը դառնալով, մէջը գտնուած 12000 խորանարդ մէթր ջուրը դուրս ցայտեցաւ և մեքենայիս գտնուած տեղը ջրով ողողեցաւ։ Հոն, խրմիթի մը մէջ բնակող մեքենավար Վասիլ ու իւր կինը խեղդուեցան։ Շարաթ երեկոյ ամբողջ Պոլիս մթութեան մէջ մնաց և միայն տեղ տեղ քարիւղի լամպառներ գրուեցան։ Առ այժմ կապի հին կաթսան սկսած է գործածուիլ։ Կ'ըսուի թէ փոթորկին գիշերը Սև ծովուն մէջ հելլենական շոգենաւ մ'ընկղմած է, յորում ուղևորներու ալ կը գտնուին եղեր. մանրամասն տեղեկութիւնք կը պակսին տակաւին։

— Շուէտ Նորվեկիոյ թագաւորին որդի Իօժէն Ոսկար իշխա՝ր երկուշաբթի օր Ֆրաեա մարտանաւով մարաբաղաքս գալով, Վեհ. Սուլթանին կողմանէ մեծ պատուով հիւրասիրուեցաւ։

— Անգլիոյ արտաքին գործոց նախարարը, ի պատասխանի Լոնտոնի օսմ. դեսպան Բիւսթէմ փաշայի մէկ հարցման, կը հերքէ այն զրոյցը թէ Անգլիոյ եւ Աւստրիոյ միջև դաշնագիր մը կնքուած է՝ որպէս զի Աւստրիա Սերանիկը գրաւէ։

— Ըստ որոշման Պեռլինի խորհրդոյ, այսուհետև՝ իւր հայրենիքէն բացակայ եղող գաւառացւոյ մը խճուղեայ շինութեան տուրքն, որ է չորս օրական, եթէ իւր հայրենեաց մէջ գտնուող ազգականներէն չգանուի, իրմէն պիտի գանձուի՝ ուր որ կը գտնուի ինք։

— Կ. Պոլսոյ և գաւառական գլխաւոր քաղաքաց մէջ կալուածներ գրաւի առնելով՝ դրամական փոխատուութիւններ ընելու համար, դրամատուն մը հաստատելու արտօնութիւն խնդրուած է։

— Մշոյ նախնական դատարանի անդամ Հաֆիզ և Էյուպ էֆէնտիք դատաստանի ենթարկուած են, հասկցուած լինելով որ գողութեամբ ամբաստանեալ Շիրանցի Մկրտչ Սէյիմի դատավարութեան պահուն տպօրէն ընթացից մէջ գտնուած են։

— Քաղաքապետ Բըտման պէյի որոշմամբ, մայրաքաղաքիս թրամվէյի կառքերու իւրաքանչիւրին մէջ թաղապետական շաւուշներ պիտի գտնուին։ Թրամվէյի ձիերու կողմէ կատարուած օրական ութ երթեւեկութիւնը վեցի պիտի իջնէ և զառիվերերու վրայ երկու ձի աւելի պիտի լծուին։

— Անցեալները նաւահանգստին մէջ հելլենական շոգենաւ մը Ունճեան և Լուսեան ընկերութեան Թարանուս շոգենաւին զարնուելով, բաւական վնաս պատճառած էր այս վերջինին և այդ պատճառաւ դատ բացուած էր։ Արդ խնդիրն հաշտարար եղանակաւ կարգադրուած և հելլենական նաւուն նաւապետը պահանջուած վնասը հատուցած լինելով, խնդիրը փակուած է։

— Վերջերս պատրաստեալ վիճակագրէ մը կերևի թէ Պրուսայի նահանգին իսլամական վարժարանները կը յաճախեն 60.341 մանչ և 32.879 աղջիկ, իսկ քրիստոնէից վարժարանները կը յաճախեն 10 864 մանչ և 5792 աղջիկ։

— Մաքսային վերատեսչութեան հասոյթն այս տարի 100 հազար ոսկւոյ առաւելութիւն մ'ունեցած է բաղդատմամբ նախորդ տարւոյն։

— Այսուհետև, երբ պատգամաւորութեան, պատգամի լուծման վերաբերեալ խնդիրներէ ծագումն առած պարէնի (նաֆթագա) դատերու առթիւ Պատրիարքարանի, Մետրոպոլտարանի ու Առաջնորդարանի ժողովոց կողմանէ տրուելիք վերջնական որոշումները գործադրութեան դրուելու պահուն, պարտականի մը բանտարկութիւնը հարկ դատուի, այդ պարտականին համար ապրուստի ծախք չը-պիտի առնուի պարտատէրէն։

— Ի Մարաին պաշտօնեայներ զրկուած են քննելու համար տեղւոյն կառավարիչ Էնիս փաշայի դէմ եղած բողոքներն։

— Գեղարուեստից վարժարանի անցեալ տարւոյ շրջանաւարտներէն ճարտարապետութեան վկայական տացող երկու պատանիք, Նիզամէտտին պէյ ու Ֆէյզի պէյ, Փարիզ պիտի ղրկուին իրենց ուսումը կատարելագործելու համար։ Սոքա երեք տարի պիտի մնան ի Փարիզ և ամսական 250-ական ֆրանք պիտի ստանան, ցորչափ մնան հոն։

— 1890 տարւոյ դեկտ. ամսոյ մէջ 1101 մահ պատահած է ի Կ. Պոլիս, որոց 68 ծաղկախտ։ Այս 1101 մահեր կ. բաժնուին այսպէս. 604 իսլամ (296 այր և 308 կին), 443 քրիստոնեայ (257 այր և 186 կին), 54 հրեայ (23 այր և 31 կին)։

— Կայս. կառավարութիւնը նկատելով որ գաւառաց ոմանց մէջ հաստատեալ երկրագործական վարժարանք ու տիպար ագարակք բաւական գոհացուցիչ արդիւնք տուած են ցարդ, մտադիր է նահանգաց մէջ երկրագործական վարժարաններ ու տիպար-ագարակներ հաստատել։

— Պ. Կրանէ յաջողած է կազմել ընկերութիւն մ'որ պիտի գնէ ու շահագործէ Իզմիրի քարափունքը։

— Կ'ըսուի թէ Ճարտնական մարտանաւք վաղը պիտի մեկնին մայրաքաղաքէս։

— Սելանիկի երկրագործական վարժարանին ու տիպար-ագարակին, ինչպէս նաև այսուհետեւ հաստատուելիք երկրագործական վարժարանաց ու տիպար ագարակաց համար գործադրելի ընդհանուր կանոնագիր մը յօրինուած է Առևտրական և Հանրօգուտ շինութեան նախարարութեան կողմանէ։

Հայ բանտարկելոց արձակմանն առթիւ իրր հարիւր ստորագրութեամբ շնորհակալութեան գիր մը մատուցուեր է Բերայի Վսեմ. Կառավարչին։

Աբիկեան Մեծ. Միհրան էֆէնտիի նոր հրատարակութիւնը։

1. Թաբպիգաթի Միւնճաատ։ Կը պարունակէ պաշտօնական և ոչ պաշտօնական գրութեանց հրահանգներ։ Դին 3 ղրշ։

2. Մուալլիմի Ինճա։ Նախորդին բանալին է։

3. Նուդզար Մէնմուաատ։ Կը պարունակէ բազում պերճ ճառեր։ Դին 4 ղրշ։

4. Բառարան Տաճկերէն, Հայերէն, Գաղիերէն կազմեալ. 25 ղրուշ։

ԱՐԺԷՔ ԴՐԱՄՈՑ
Օսմ. լիրան 100 ղրշ. էն

Մէճիտիէ	108 20	Ամէր. մէնթ. (6 հատ)	82 20
Մէթալիք	100 20	Բուսիոյ բոյ	89 30
Պէշլիք, Ամիթլըզ	102 20	Նաբոլէոն	87 5
Քառորդ մէճիտ	104 20	Գրիմիզ	51 10
Մանր մէճիտ	103	Անգղ. լիրա	109 38
Մանրի թղթադրամ			7 85
Գոնսոլիտէ (Երկար.)	20 30	Ռուս. երկ բաժին	77 3/4
Նոր փոխառ. (Ոսկի)		Թաւրիզ (մանր)	23 30
(Թահվիլաթը Սամ.)	81 15	Թաւրիզ (մեծ)	23 30

ԱՐՏՕՆԱՏԻՊ Ա. ՍԱՀԱԿԵԱՆ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Գ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
Լսմի Զապրիէ տաեսէսի, թիւ 61